Փետրվարի 12-ին, Բուն բարեկենդանի կիրակի օրը, Մեծ պառնոց օրերի կարևոր նշանակությունը բնորոշելով, սրբազանը կոչ արեց հափառացյալներին հողեղմոր զգաստության զայ և դիմել զիտակեցված ապաշխարություն:

Փետրվարի 14-ին, Տյառնընդոտուչի օրը, բնորոշելով օրվա տոնի հողեղմոր իմաստը, սրբազանը հափառացյալ ժողովրդին հանկանալի կերպով բացատրեց ջրիստոնեական

լույսի մեծությունը, կենսառականությունը, մխիթարությունը և փառքը:

Փետրվարի 19-ին, Արտաքսման կիրակի օրը, սրբազանը խոսեց ապաշխարության մասին, շեշտելով հավատացյալների առկա տված ռեզոլյուցիայի խնդրվածքի անհրաժեշտությունը իրենց մեղքերի համար և ապաշխարության սփոփարար նշանակությունը:

2) Հոգեշնորհ Ս. Նաճապետ վարդապետ Մուրադյանը քարոզեց փետրվարի 18-ին, շաբաթ օրը, Հայր սուրբը տվեց պարզ համեմատությունը Հին և Նոր Կտակարանների, իր քարոզի վերջում շեշտելով Քրիստոսի տված պատգամների ճշմարտությունն ու բարոյական բարձր նշանակությունը: Միջև կի լուծանել, այլ լնույս բնաբանի առանցքի շուրջ հյուսելով իր քարոզը, նա մատչելի կերպով հավատացյալ ժողովրդին ժանտթացրեց Քրիստոսի բերած սլրացումներին՝ Հին Կտակարանի օրենքների և պատվիրանների համեմատությամբ:

3) Հոգեշնորհ Ս. Վահան արեղա Գալամդարյանը, փետրվարի 9-ին, Ս. Վարդանանց տոնի առթիվ, Երևանի Ս. Զորավար եկեղեցում, խոսեց իր ոգևորիչ քարոզը՝ Վարդանանց մեծ հերոսների հիշատակին նվիրված:


Փետրվարի 11-ին, շաբաթ օրը, Մայր Տաճարում, հայր սուրբը խոսեց Եռյնպես Վարդանանց մասին, ընդգծելով նրանց հիշատակի քաղցրությունն ու նվիրականությունը մեր ժողովրդի հիշողության մեջ:

Փետրվարի 14-ին, Տյառնընդառաջի օրը, Երևանի Ս. Սարգիս եկեղեցում, հայր Վահանը խոսեց օրվա խորհրդի և նշանակության մասին:

4) Հոգեշնորհ Ս. Հայրիկ արեղա Ավետիսյանը քարոզեց փետրվարի 9-ին, Վարդանանց տոնի օրը, Երևանի Ս. Սարգիս եկեղեցում, ժողովրդի հոծ բազմության ներկայությամբ: Ընդգծելով Վարդանանց հերոսամարտի պատմական նշանակությունը, հայր սուրբը հատկապես շեշտեց Ս. Ղևոնդյանց հավատավոր և անձնվեր ռդին, նրանց ղեկավար, կազմակերպող դերը, եկեղեցասիրությունը, սերը Հայրենիքի և ժողովրդի հանդիպ:

5) Հոգեշնորհ Ս. Մաշտոց արեղա Թաշիրյանը, փետրվարի 4-ին, շաբաթ օրը, քարոզեց Մայր Տաճարում Ս. Սահակ Պարթևի մասին, նշելով մեծ հայրապետի անգնահատելի երախտիքը հայ մշակույթի պատմության ասպարեզում:





ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԸ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Փետրվարի 9-ին, Ս. Վարդանանց աղագային-եկեղեցական մեծ տոնի որդ, երեկոյան ժամը 8-ին Հոգևոր Դժմարանում, ի իշատակ Վարդանանց, կալմակերպվեց հանդես, որին ներկա էին Մայր Աթոռի միարանությունը ղերապատիվ Ս. Սահակ Եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանի գլխավորությամբ, Գերագույն Հոգևոր Խորհրդի Դարգելի անդամները, Դժմարանի դասախոսները, ուսանողությունը, Մայր Աթոռի պաշտոնություններ և հրավիրյալներ իրենց մի բազմություն:

Ս. Վարդանանց իշատակին նվիրված հանդեսը բացվեց Տերունական աղոթքով և Հայաստանի Պատական իմնով:

Բացման խոսքով հանդես եկավ Հոգևոր Դժմարանի վերատեսուչ պ. Մարտիրոս Տեր-Ստեփանյանը, որը հակիրճ բայց բովանդակալից խոսքերով ընդգծեց Վարդանանց դույամարտի կրոնա-բարոյական, պատմական ու հայրենասիրական նշանակությունը մեր անցյալ պատմության մեջ և նշեց, որ հայ սերունդները երախտագիտության զգացմունքներով ևն ոգեկոչել միշտ Ս. Վարդանանց մարտիկների խնկելի իշատակը:

Ապա զեկուցման համար ծափահարությունների տակ խոսքը տրվեց Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ պրոֆ. Ա. Ղարիբյանին, որը Վարդանանց հերոսամարտի նախընթաց և հետագա զեպքերի մասին մանրա-

մասն ու դաստիարակիչ մի բանասիրություն տրեց, վերլուծելով Սահակ-Մկրտչյան ժամանակաշրջանի բազարական, հասարակական, մշակութային և կրոնական ընդհանուր իրադարձությունները: Հարգելի պրոֆ. սորը մեծ խանդավառությամբ խոսեց Ս. Վարդանանց հերոսների անձնվիրության, մարտական արիության, եկեղեցասիրության, ժողովրդասիրության ու հայրենասիրության մասին, նշելով միաժամանակ մեր ժողովրդի հատուկ պայքարի և հաղթանակի անընկճելի ոգին, ապրելու և տեսելու վճռականությունը, ազատության սերը: Մայր Աթոռի միարանության կողմից խոսեց հոգեշնորհ Ս. Մկրտչյան արեղա Անթարյանը, որը իր սեղմ և ոգեշունչ խոսքերով համառոտակի բնութագրեց Ս. Ղեռնդյանց և Ս. Վարդանանց «ոգին», ընդգծելով այդ հավատավոր և հայրենասեր ոգու խիզախությունը, նաև նախապատի, Հայրենիքի և ժողովրդի ընծայարեքվելու պատրաստակամությունը, մարդկայնությունը, լավատեսությունը, պաշտամունքը հայրենական սրբությունների և Ազգային եկեղեցու հանդեպ, և այն բոլոր բարոյական բարձր առաքինությունները, որոնք այդ ոգուց, որպես հոգեշունչ ու նվիրական ժառանգմանցիկ մեր ժողովրդին:

Ըոխ, բովանդակալից ու զեզեցիկ էր նաև հանդեսի զեղարվեստական մասը: Թեյադրա-


կան, հուզիչ և տպավորիչ էին օրվա տոնի խորհրդին նվիրված բանաստեղծություններն ու ճառերը, երգերն ու արտասանությունները, Բարեշնորհ Հովհաննես սարկավազ Դանիելյանը ոգևորությամբ կարդաց բանաստեղծ նաիրի Զարյանի «Զայն հայրենական» պոեմաչարքից մի հատված, Վարդանանց նվիրված իր ինքնագիր բանաստեղծությունը կարդաց Հոգևոր Ճեմարանի նախկին սան Գ. Շեկիկյանը, Վ. Թեքեյանի «Եկեղեցին Հայկական դասական և հոյակապ բանաստեղծությունը արտասանեց Բարեշնորհ Ազատ սարկավազ Սանթրոյանը, Բուլղարիայից Մայր Աթոռ ժամանած նոր Ճեմարանական Գրիգոր Փափազյանը ջերմ և վարակիչ հուզականությամբ ընթերցեց հոգևորական Ս. Մեսրոպ արեղա Անթարյանի «Իմ ժողովրդի հերոսամարտը» բանաստեղծությունը:

Հոգեշնորհ Ս. Կոմիտաս վարդուպետ Տեր-Ստեփանյանը բացառիկ հուզմունքով և կատարողական մեծ վարպետությամբ երգեց Ա.

Տիգրանյանի «Դավիթ բեկ» օպերայից Դավիթ բեկի հիանալի արիան՝ «Ո՛հ, իմ լքնաղ, սիրուն Հայրենիք»-ը, Հոգևոր Ճեմարանի ուսանողական երգչախմբի կողմից երգվեցին Ա. Վարդանանց հիշատակին նվիրված շարականներ և խմբերգներ, Մեներդները հաջողությամբ կատարում էին Խորեն սարկավազ Պալյանը և ուսանող Պողոսը, Հանդեսի դեղաբուսական բաժնի պատրաստման և կատարման համար ջանք և հմտություն չէր խնայել դասախոս Հ. Գևորգյանը, Շնորհավորության արժանի էր Ճեմարանի վերատեսչությունը Ա. Վարդանանց խնկելի հիշատակին նվիրված այս հանդեսի կազմակերպման համար:

Նախագահ գերապատիվ Ս. Սահակ եպիսկոպոսի փակման խոսքով և «Պահպանիչ»-ով ավարտվեց Ա. Վարդանանց դրական-ցեղաբուսական այս հույժ շահեկան հանդեսը: Սրտագին հարգանքներ Վարդանանց խնկելի հիշատակին:





ՄԻՍՄԻՐՈՂ ԱՐԵՎԷԼ ԱՆԹՈՒՅՈՒՆ:

ԻՄ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԵՐՈՍՍՄԱՐՏԸ

Քե՛ն մտխիւր ու ամիւրակ շտաւ ե՛ն շխլովել հողիս վրա,
Ի՛նչ ե՛ն սերլով հրոսակներ ասայատակել ե՛ն Երկիրն իմ,
Եվ էջեթիմ մե՛ր պատմութեան ժողովրդիս արշուներ կա,
Ընդզգումի կայծր սակալն հրդեհել է մե՛ր էլ հողին...:

Մենք էլ հանուն նշմարտության մե՛ր բազկի մեջ զենք ԼԵ՛՛ք զրկել,
Մահառել ԼԵ՛՛ք բոնության զեմ, դուրս ԼԵ՛՛ք Եկել անեղ մատի,
Եվ վարաւուն մե՛ր արշունով հայրենի հողն ԼԵ՛՛ք պաշտպանել,
Թեկուզ քնկել ԼԵ՛՛ք կլուսմեա մով լանջերին մե՛ր լեռներին...:

Թվով մե՛ր՝ Բիշ, հողը՝ սակավ, կովի Ելանք զեռության զեմ,
Չսառանց մե՛ր վին հողին Սառանջան կես քրի տոռաջ,
Պայքարի հողը՝ զրոշ պարզած զեռացինք մե՛նք մանվան քնդզեմ,
Ու այնուհետ հայ Երկրի տակ էլ շլավէր լաց ու հառաջ:

Տղմուտ զեռի զորշ ամիւրին լիոված հաղար կմախներ կան,
Ու պերճութեամբ վիթխերն ԼԵ՛՛ք ապերշանիկ մե՛ր եին կյանքի,
Կուրծիք Երանգ պառառով էլ հանուն անդին ազատության,
Ու բարիքներ անելին միշտ հողի վրա Հայոց Երկրի...:

Պա մե՛ր արդար իրավունքն էր... ո՛վ կիշխէր այն խել մեղեդից,
Չէ՛ որ մենք էլ սիրա ռոճեկնէք, մենք էլ էինք կյանքը սիրում...
Էլ ինչո՞ւ քույր տալ ոտխին, որ մեղ բերէր ման ու կսկիծ,
Բանի որ ու՛ր կար անեմանց մե՛ր առնական մկաններում:

Հերոսամարտն այն փառանկը, որ բորբոքվեց Ավարայրում,
Ուղան կտրմիւր մե՛ր արշունի բմբուտացումն էր սփռազան,
Ու դրանցովեց ոսկնտառով մե՛ր պատմության մե՛նք մտայանում,
Ուրպես խոթտ հերոսազում քնդզեմ դավի, ստեղծության...:

...և՛ անեմանց այդ պայքարի երկարածից ոսկեղբան
Պարզեց մեղ ազատ Երկիր, դարբեց կյանքը մե՛ր երջանիկ,
Տվեց մեղ քափ ու ներշնչում քնքանալու զեպ ապագան,
Ուր այնպե՛ն լուսաշող է, այնքա՛ն շնեղ ու զեղեցիկ...:





ՀՈԳԵՃՆՈՐԷ ՄԵՍՐՈՊ ԵՐԵՂԵ ԱՆԹԱՅԵԱՆ

Մեսրոպ արեղա Անթաթյանը, ավագանի անունով Փայլակ, ծնվել է 1929 թվականին Հերոսական և պատմական Մուսա լեռան տաճարակ հայ գյուղերից Կաղբի գյուղում, բարի և հավատացյալ գյուղացու ընտանիքում: Փայլակի մանկությունն անցել է ծննդավայրի հարազատ բնության գրկում մինչև 1939 թիվը, երբ Մուսա լեռան ամբողջ հայությունը, հարկադրաբար լքելով տուն ու հող, հեռացավ հայրենի իր սրբափայլից և իրր զաղթական ապաստան գտավ հյուրենկայ Սիրիայում և իրանաՆում: Գաղթողների թվումն էին նաև Փայլակի ծնողները, որոնք իրենց հայրենակիցներին մի մեծ մասի հետ հաստատվեցին Այն-էլ-Ճարում (Լիրա-նան): Պատանի Փայլակին իր նախակրթությունն ստացավ Այն-էլ-Ճարի դպրոցում, որն ավարտեց փայլուն հաջողությամբ 1944 թվին, և նույն տարվա հոկտեմբերին ընդունվեց Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանը: Ուսումնասիր, ուշիմ և ազնիվ ուսանող առաջ բացվում են հայ մշակույթի, լեզվի, գիտության, զարգացման գոհերը: Փայլակին իր հեղահամրույր բնավորությամբ, օրինակելի վարք ու բարքով և ջանասիրությամբ իր վրա է հրավիրում վարժարանի տեսչության, դասախոսական կազմի ուշա-



դրությունը և իր ընկերների համակրանքը: 1947 թվին նա մեծ հաջողությամբ ավարտում է Ժառանգավորաց վարժարանի դասարանական բաժինը ու նույն տարվա աշնանը ծնողների հետ ներգաղթում է Հայաստանի և ընդունվում Հոգևոր Ճեմարան:

1951 թվին, պիսկով կալուն և խոր գիտելիքներով, նա ավարտում է Հոգևոր Ճեմարանի լուսանկարչության բաժինը, իրրև սովորում առ անրկայացնելով ռեդսես Շնուրհային ուսկես պակակ ղևմ աշխատությունը, որն արժանանում է գերազանց գնահատականի: Նույն տարվա նոյեմ-

բեր ամսին ձևանադրվում է սարկավագ:

Փայլակ սարկավագը տաճարական գրասենյակներից աշխատակցել է ժեշմիածին աճապրին անկեղծ և անմիջական հայրենաշունչ բանաստեղծություններով և այլ հոգվածներով:

Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ, 1956 թվի հունվարի 22-ին Փայլակ սարկավագը ձևանադրվում է կուսակրոն քահանա և վերանվանվում Տ. Մեսրոպ:

Վեհափառի հրամանով Տ. Մեսրոպ արեղան նշանակվել է Հոգևոր Ճեմարանի վերակացու և ժեշմիածին աճապրի խմբագրության աշխատակից:





ՄԱՅՐ ԱԹՈՒԻ ՎԵՐԱԿԱԶՍՎԱԾ ԹԱՆԳԱՐԱՆԸ

որին Ս. Օձուրյուն Տ. Տ. Վաղգին Ա. Կաթողիկոսի առաջին և կարևոր դերերից մեկը հանդիսացավ Մայր Աթոռի թանգարանի վերակազմակերպումը՝ Վեհափառի անմիջական հսկողությամբ և կարգադրությամբ կազմվեց հատուկ հանձնաժողով Մայր Աթոռի միաբաններից և Հայրենիքի անվանի գիտնականներից, որանց թվում պատմական գիտությունների դոկտոր և Սրբանի պետական պատմական թանգարանի ղեկավար Կարո Վաֆադարյանը, պատմական գիտությունների դոկտոր Բարգև Առաքելյանը և ուրիշները։ Հանձնաժողովը նորին Վեհափառության նախագահությանը ներկայացրեց առաջարկներ, որոնցից մեկը պատմական թանգարանը Վեհափառ Հայրապետն այդ դերին համար չէր դիտում սրբապատկերի իր թանկագին սրբերն ու ժամերը նա առավոտից մինչև ուշ երեկո նստած թանգարանում հանձնաժողովի մյուս անդամների նետ, զեկավարում էր աշխատանքները, որպեսզի սր առաջ պատրաստվեն Մայր Աթոռի թանգարանը և բոլոր ուխտավորների ու այցելուների համար մատչելի դառնան Մայր Աթոռի պարավոր սրբություններն ու պատմական տեղերը ներկայացնող սրբազան իրերը, որոնք պատմական հետազոտանցայից ժողովրդական են անացել մեկը։

Թանգարանը բաղկացած է երեք բաժնից, որոնցում տեղավորված են Մայր Աթոռի միջաբն պատմական և նվիրական սրբություններն ու հանգիստական արժեքները ներկայացնող իրերը, որոնք դուրս բերվել են մոտացության

մշտնջից՝ հերկրապաշտություն և ի հողերը միջինաբնություն բարեկարգ ուխտավորների։ Մայր Աթոռի թանգարանի ներք բաժնիներում մոտավոր թվով կա 400 ցուցանմուշ։ Սայց այդ չէ բոլորը, Վեհափառի ցանկությունն է տվելի ևս մեծացնել թանգարանը և այնտեղ համարել պատմապաշտ կողմերում դրված սրբություններն ու հանգիստները։

Այժմ համառոտ կերպով ցանկանում ենք նկարագրել Մայր Աթոռի վերակազմված թանգարանը, որի երեք բաժնիներում տեղավորված են՝

1. Տրդատ Գ թագավորի արքայական թագի անկասամասը (4-րդ դար)։
2. Թագադրության շնորհանքա-Սմբատ թագավորի բյուրեղյա խաչը (966 թ.)։
3. Աշոտ Բ (Նրկաթ) թագավորի երկաթյա խաչը իր տուփով (10-րդ դար)։
4. Հավուդ թագի Ամենափրկիչ Ս. Նշան— փորագրված փայտի վրա, նկարագրող սուփով (14-րդ դար)։
5. Բյուրեղյա խաչ հունարեն արձանագրությամբ (11-րդ դար)։
6. Խոտակերպ Ս. Նշան— շինված Պոռչյան էպի իշխանի պատվերով (1300 թ.)։
7. Ս. Նշանի պատարան— Աստուխանի բարեկարգ կանանց նվերը Հովսեփ արքեպիսկոպոս Արղունյանին (1775 թ.)։
8. Խաչը զանազան տեսակի ու ձևի (13-րդ դարից մինչև մեր օրերը)։
9. Պատարան Նոյի տապալի մասունքի— զորք բռնաբերողի նվեր (1695 թ.)։
10. Մասնատուփի՝ Արագածի Ս. Նշան (13—14-րդ դար)։
11. Պագաֆի տուփ Ս. Գրիգոր Լուսավորչի նվեր (1691 թ.)։

12. Կանթեղներ, որոնք աչքի են ընկնում իրենց բարձր արվեստով (14-րդ դարից մինչև մեր սրերը)։

13. Թուրքսոմներ 17-րդ դարից մինչև 19-րդ դարի վերջը)։

14. Սկիհներ (17-րդ դարից մինչև մեր սրերը)։

15. Ս. Նշանի պահարան—պատվիրված Հովսեփ արքեպիսկոպոս Արղուիսյանի կողմից Մոսկվայում (1795 թ.)։

16. Պահարան մասանց, արծաթյա, առաքելոց պատկերներով— Կարին քաղաքի նվերը Մշտ Ս. Կարապետին։

17. Մասնատուփ (10—11-րդ դար)։

18. Պահարան Ս. Հակոբյա Աբի, սաղաֆապատ (1780 թ.)։

19. Մասնատուփ սյուվոնսկան և չայկական արձանագրությամբ (1689 թ.)։

20. Պահարան (13-րդ դար)։

21. Ս. Արիստակես Չայրապետի Աջր։

22. Ս. Հակոբ Մծրնա Չայրապետի Աջր մասունքով, Սաղմոսավանքից (1658 թ.)

23. Ս. Հովհաննես Մկրտչի Աջր—նվեր մահանսի նիկողոսից Ս. Կարապետի վանքին։

24. Ս. Թադևոս սուսբյալի Աջր մասունքով։

25. Մասնատուփ Ս. Սաևփանոսի նշխարով (նորոգված 1698 թ.)։



Հեղկանյանի նվիրած վարդույրը
Ս. Սահգսի եկառով (1799 թ.)



Մայր Աթոլի քանդաւանի խաչերը

26. Ս. Հակոբ Մծրնա Չայրապետի մասունքի տուփ, Թադևոս սուսբյալի և Ստեփանոս նախավիպի մասունքներով (17-րդ դար)։

27. Ս. Մեռոնի կաթսա—Քիֆիսեցի Հակոբի նվերը (1672 թ.)։

28. Ս. Մեռոնի կաթսա— Հակոբի, Պետրոսի և ուրիշների նվերը Ս. Էջմիածնին, Կալկաթայից (1841 թ.)։

29. Ս. Մեռոնի կաթսա— վանեցիների նվերը Ռշտունյաց Աթոռին (1883 թ.)։


30. Ս. Մեռոնի կաթսա— նոր-նախիչեանցի Դասպար Հարությունյանի Կարապետ օղյանի հիշատակը Ս. Էջմիածնին (1895 թ.)։

31. Ս. Մեռոնի սափոր— Հեղկանյանի նվերը Ս. Էջմիածնին (1815 թ.)։

32. Հայրապետական, եպիսկոպոսական և վարդապետական առանքեր և դավապաններ, որոնց մեջ Հայտնի են Ղալաս, Ղազար և Գեորգ Դ կաթողիկոսների, Արրահամ պատրիարքի և այլ հայտնի աստվածաբան վարդապետների զտվածքները։

33. Աստվածաշնչեր (տոգված 1680 թվից մինչև մեր սրերը)։

34. Ձեռագրերի բնույթի նմուշներ, որոնց մեջ արժեքավոր է իր հնությամբ վրաց Կա-



Կոմիտասի վարդապետի շուրջադր. և տառներ, վաղապահներ ու խաչեր:

վաստառ Կաթողիկոսի 1950 թվի նվերը երա- նաշնորհ Գեորգ 2 Կաթողիկոսին— սաղմո- տարան մազադափի վրա:

35. Վարագույրներին ընտիր նմուշներ տալա- ծո և գործված պատկերներով՝ մեծ և փոքր լավերի, հայրապետական արծվեգորգեր, սեղանի ծածկույցներ ասեյնազործ և ոսկի- լիկ, որոնց մեջ աչքի է ընկնում հնդկաճայերի նվեր վարագույրը (1799 թ.) և Սարգսի պատկերով Վարագույրն այնքան մեծ է, որ երեք պատերի վրա է ամրացվել:

36. Հանճարեղ երաժշտագետ Կոմիտաս վարդապետի և Գարեգին վարդապետ Հով- սեփյանի (հետագայում Կաթողիկոս Մհեր տան Կիլիկիո) շուրջադրները:

37. Հովսեփ արքեպիսկոպոս Արղուիսյանի շուրջադր— նվեր Աստրախանի հայերից (1807 թ.):

38. Գեորգ Կ Կաթողիկոսի անձնական իրե- րը:

39. Դեորգ Զ Կաթողիկոսի ողորագործած եկեղեցական զգեստներն ու անձնական իրերը:

40. Ռազեր, որոնց մեջ աչքի են ընկնում Կարենցի Հակոբի նվերը: Էիմ անապատի, Մշո Ս. Կարոպետի, Տաթևի, Վարազա Ս. Խաչի և վերջապես հետագոր Զինաստանի հայերի նվերները Ս. Էյմիածնին և այլ հայ- կական վաճառքին ու եկեղեցիներին:

41. Կաթողիկոսական խույրեր (15-րդ դա- րից մինչև մեր ժամանակները):

42. Կաթողիկոսներ տուգնագործ և մար- ցարտաշար (1719 թվականից մինչև մեր օրերը):

43. Առեղնապարծ և մարդարտաշար վա- կառներ և արտախորտակներ (17-րդ դարից մինչև մեր ժամանակները), որոնց մեջ իր պատմական արժեքով աչքի է ընկնում Առա- բել Գալթիմեյի պատմագիր վարդապետի մարդարտաշար վակասը:

44. Կաթողիկոսական թանկարժեք կոնքեռ- ներ, ասեղնագործ և մարդարտաշար բաղ- պաններ, փորտաբներ և ուրարներ:

45. Գոտիների թանկարժեք ճարմանդներ, մարդարտաշար և տկանակուտ (1786—1901 թ. թ.):

Այս բոլորից բացի Մայր Աթոռի թանգա- րանում պահվում են ոսկյա և արծաթյա հին և նոր ականակուտ և մարդարտաշար եկեղե- չական սպասներ՝ խաչեր, ամետառաններ, լիկհներ, բուրվառներ, խաչվառներ, զափա- վաններ, դուռներ, թաղեր, սաղավարտներ, վակասներ, Լմիփորոններ, շուրջադրներ, փոր- տաբներ, ուրարներ, բաղպաններ, Կաթո- րիկոսական բողեր, թանկարժեք կոնքեռներ, շապիկներ, խնկամաններ, Կաթողիկոսական արծվեգորգեր, վարագույրներ, զանազան ազգերի հին և նոր դրամներ, մատանիներ, թանկարժեք պանակներ և շրանջաններ:

ԵԳԷՇԵ ԱՐԵՂԱ ՍԱՐԿՍԱՆ





ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊՐՈՖ. Ն. ԱՃԱՌՅԱՆ

Մ Ե Ս Ր Ո Պ Մ Ա Շ Տ Ո Ց*

ԳԼՈՒԽ ՎԵՑՆԵՐՈՐԴ

ԵՐՐՈՐԴ ԲԱՐՈՋՋԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

(Լուսավորություն Գողթան, Սյունյաց և Վրաստանի)

§ 1

Մեսրոպի երրորդ քարոզչական գործունեությունը տարածվում է Հայաստանի Գողթան և Սյունյաց գավառները և սրանց սահմանակից Վրաստան աշխարհը: Մեսրոպ Հրաման առավ Սահակից, որպեսզի այս երկրների բարրարիկ ժողովրդի մեջ քարոզության սկսի: Յետ աշտոռիկ առնայր հաւանութիւն երանելի Մաշտոց, որպէս զի Տէր եպիսկոպոսն ի Կայենականսն, և նա ի սփիւռս հեթանոսաց զրանն կենաց սերմանիցեն»:

Կորյունի այս խոսքը մութ է և չի հասկացվում, թե ո՞վ է «Տէր եպիսկոպոսը» և ի՞նչ բան է Կայենականը: Նախ՝ կարելի է առաջինը ընդունել թե՛ իբր հասարակ անուն և թե՛ իբր հատուկ անուն: Կորյունի առաջին տպագրության մեջ գրված է տէր, որով ո՛չ թե հատուկ անուն, այլ պատվանուն է իմացվում, իսկ երկրորդ հրատարակության մեջ (1894 թ.) դառնում է Տէր (իբր հատուկ անուն): Տէր իբրև հատուկ անուն անսովոր չէր 5-րդ դարի Հայոց մեջ, այսպես ունենք Տէր (կամ նաև Տիրայր) Խորհենացի (Փարպեցի, էջ 41) և նույն կամ ուրիշ Տէր անունով մեկը, որին նախանձու կրոնավորները ժանհանդիստ հայածանօք վախճանեցուցին» (Փարպեցի, Թուղթ, էջ 609): Տէր իբրև հասարակ անուն են

հասկանում Ստ. Նազարյան («Հիստորիայ», 1860 թ., էջ 244), Գարաջյան («Քրեական պատմություն», հատ. Դ, էջ 25), Գ. Փառնակ («Անահիտ», 1905 թ., էջ 206), Նահապետյան («Բաղմտվէպ», 1913 թ., էջ 141), Յետգյան («Կորիւն», էջ ԺԵ և 27), Թորոսյան («Բաղմտվէպ», 1931 թ., էջ 466), Ակիսյան («Հանդէս ամսօրեայ», 1935 թ., էջ 475 և 523) և վերջին անգամ Արեղյան («Սովետական գրականություն», 1941 թ., № 2, էջ 48ա), որոնք բոլորը ստեր եպիսկոպոսա՝ ասելով հասկանում են Սահակ կաթողիկոսին:

Հարց է, թե կարելի՞ էր Սահակ կաթողիկոսի անունը այսպիսի անշուք մի ձևով տալ: Սրան էլ պատասխանում է Թորոսյան՝ զրական կերպով. նա հիշում է Կորյունից երկու հատված, որոնց մեջ նույնպես Սահակ կաթողիկոսը հիշվում է լուկ եպիսկոպոս տիրոջ սով. «Յանդիման լինէր սրտոյ եպիսկոպոսին Սահակայ և թագաւորին Հայոց» (էջ 30). «Ազդ լինէր թագաւորին (= Վնամշապուհ) և սրտոյ եպիսկոպոսին (= Սահակ)» (Կորյուն, էջ 21):

Մնում է իմանալ, թե ի՞նչ է Կայենականը:

Այս բառով Ստ. Նազարյան (անդ) հասկանում է սմայր Արարատյան աշխարհը, Գորազայան հասկանում է օրուն Հայքը, Մխարճյան («Հանդէս ամսօրեայ», 1902 թ., մայիս) «Կայէն ընդդի շրջակայքը», Փառնակ = Ֆրետրգյան դնում է պահլավերեն kayanik «թագավորական» բառի հետ նույն (արմատն է kay «թագավոր»)։ Նահապետյան «կայանք

* Երբեմնակված ամսագրի 1954 թվականի № 30 XI-ից, XII-ից, 1955 թվականի № 30 I-ից, II-ից, III-ից, IV-ից, IX-ից և 1956 թվականի № 1-ից:

Քաղաքացիացի»։ Թորոսյան («Քաղաքացիացի», 1931 թ., էջ 467) ասում է, թե շատ է որոնել կայնեական անունով մի դավառ, բայց չի գտել, ուստի ուղղում է այդ բառը «ի հայրենականս» կամ «ի կայս արքունականս»։ Անկենդան էլ «կայնեական» ասելով հասկանում է «ի կայս հայրենական» Զս, այն է՝ Արարատ, Տարոն և Վասպուրական նահանգները, որոնցից առաջին երկուսը հայրապետական կալված էին արդեն, իսկ Արարատյան կայնեական ասելով հասկանում է «Արարատի պարակայաններում կենտրոնացած մարդկանց»։ Կարևոր էր նաև կայնեական բառը, քանի որ այդ անունով կալված չկար հին Հայաստանում, կուպել կուսիկեական նախարարական առճի հետ։ Այս տոհմանունը հիշում է Բուզանդը։ Այս տոհմից էին Վարապ իշխան Կամիհական, մին ալն քաջ իշխաններից, որանք Սշականի առջև սարսափելի կոտորած տվին Մարգարայ Սանեսան Քաղաքից։ Իսկ ինքնակալը 12-ից ավելի կովկասյան ցեղերին (Բուզանդ, Գ ժա), նույնպես Գնիթ իշխան Կամիհական, որ Հաշտենից գալիսի կոտորածից էր և եղավ մին ալն 12 նախարարներից, որ Հուսիկին Կեսարիա տարան՝ կաթողիկոսական ձեռնադրության համար (Բուզանդ, Գ ժր)։ Բայց ի կայնեական (նախորդի հայտնական ձեռով) չի կարող տոհմանուն նշանակել, այլ միայն ոտնոց, վայրը, ուստի բանասերների մեծ մասի հետ մնում է բնգուսելը, թե Սահակ և Մեսրոպ համաձայնության եկան, որպեսզի Սահակ քարոզի Այրարատում, իսկ Մեսրոպ զենա քարոզելու Հայաստանի նյութստային քարոզարիկ գալիսներում։

Մեսրոպին ընկերանում էին նաև մի քանի աշակերտներ՝ իրեն սղնակներ։ Արարացից երկու գլխավորների անունը հիշում է Կորյուն, այն է՝ «տաղանթում» Տիրալ անուն ի նորձեական գալուհի, և երկրորդին Մուշե անուն ի նահանգի Տարսույ։ Բայց մյուսներից զօրախտարար զանց է անում նամոտություն համար, ասելով «հանդերձ այլովք ևս սպասատուրն անատարանին, զոր չեմք բուսական բուս անուսնցն նշանակել»։

Ամբողջ խումբը հրամեշտ տալով Մահակին, Վաղարշապատից նախապարտ ընկավ և դիմեց զեպի Գողթն գավառը։

Անձանթ չէր Գողթն գավառը Մեսրոպին։ այստեղ էր սկսել նա իր առաջին քարոզչական գործունեությունը, այստեղ էր աշխատել նա ընաչինջ անելու հեթանոսական թաղուն աղանդը և վերապահ այստեղ էր չղացել նա հայերեն գրերը երկնելու մեծ դադափարը։ Տակավին ողջ էր այն գավառի բարեպաշտ իշխանը Շարաթ, որ Մեսրոպի ոտնոցին քարոզության ժամանակ ախպես նվաճե-

տարիմ սղնական և ձեռնառու էր եղել յուսուփարությունը տարածելու համար։ Այժմ հասել էր նաև Շարաթի որդին Գիա կամ Գյուս, որ հորը նման բարեպաշտ ու կրոնասեր մի անձ էր։ Երկուսն էլ չխնայեցին իրենց շահերը և Մեսրոպին ընծաղեցին ռոյսը հնարավոր միջոցները՝ քարոզության հարող վախճանի համար։ Մեսրոպ ման եկավ ամբողջ գավառը, ամեն կողմ քարոզեց, յուսուփարություն սրփոնց ամեն կողմ և ամեն մի դյուղի մեջ նշանակեց վանականներին խմբեր, որոնք իր սկսած գործը իրենից հետո պիտի շարունակեին, ուսումը, դիրն ու գրականությունը և կրոնը տարածելով ամենուրեք։

§ 2

Ավանդությունն ասում է, թե Մեսրոպ իր առաջին կամ երկրորդ քարոզության ժամանակ Գողթն գավառի մեջ՝ ընակվել է այժմվա Մարվանիս գյուղը, որ հիմնել է Գրիգոր Լուսավորչի անունով մի վանք, որ քաղաքի վերանորոգություններից հետո, մնում է այժմ էլ և կոչվում է տեղական զոհերին արքառով նույնպես Մարգարավանի, այն է՝ «Մեսրոպական»։ Այս վանքի և նրա գտնված համանուն գյուղի վրա բավական ընդարձակ տեղեկություն է տալիս Ե. Կայսյանը «Աղագրական հանդես»-ի ԺԱ դրոմ, էջ 323—326, ուր գետնգված են նաև դյուղի ու վանքի նկարները։ Այդտեղից ենք դառում հետևյալ տեղեկությունները բառացի։

Գողթն գավառի Բաղաձուր կոչված ձորի ամենավերին մասում գտնվում է Նյուրգուտ գյուղը, որից ցածր գալիս են հետզհետև նորստ, Աղնամիր և Այլաճի գյուղերը։ «Այլաճից զեպի Արենլը, հաղիվ 5 վերստ հեռու գտնվում է Մեսրոպական կամ Մարվանիս և կամ ռոսներեն՝ Նախիվազ կամ Նախիբ-արաղ կոչված գյուղը։ Գաղմական դարերը ավանդությունն ասում է, թե այս գյուղն է այն վանքի սրբավայրը, որ սուրբ Մեսրոպը, հայածելով նախնի կոապաշտության մնացորդները, հիմնել է այն փոքրիկ եկեղեցին, որ թեպետ նվիրված է Ս. Գրիգոր Լուսավորչու անվան, բայց և այնպես՝ հիմնադրի, Ս. Մեսրոպի անունով այժմ էլ կոչվում է Մեսրոպական և Մարվանիս ... Այս Մարվանիս գյուղը զետեղված է Այադյազ լեռան լանջին։ Ծրելու փոքրիկ վտակներ՝ Այադյազի և Զառնապետի՝ հոսելով գյուղի արևմտյան և արևելյան կողմերում, թափվում են գյուղի հարավային կողմից հոսող Մարվանուց գետակը, որ սկիզբն է առնում Դյալի-դյալ լեռից, ... Գյուղի արևմտյան կողմը, Այադյազ վտակի աջ ափին, մի փոքրիկ նարկուսյան վրա, արդեն կիսավեր պարսպով մեկուսացած, բարձրանում է այն փոքրիկ վանքը, ուր

սուրբն Մեսրոպը ազդեցիկ է Հայաստանի բուսավորության համար և քարոզել հետեւելու իրեն օրինակելու Սա դարերի ընթացքում մի Դանի անդամ վերաշինված և հասարակ քարով կառուցված մի շենք է։ Չորս սյուների և ութ կիսասյուների վրա բոլորում են արարական կամարներ, կրելով ութ պատուհանավոր մի մեծ զմբեթ և սրա մոտ՝ մի շատ փոքր, Ունի մկրտության ավազան և սրա մոտ ու «անդեպ» նույնանման բացվածքներ, հորաններն երկուսն են... Պատուհանները շատ ենդ են և կորած, յուրաքանչյուր պատին՝ 3 հատ։ Իհիակ արեմայան գուռը բացվում է լորս սյուների վրա հաստատված թաղակապ զավթի մեջ... Եկեղեցու երկարությունն է 6 սառնեն, լայնությունը 3 սառնեն և 2 արշին, իսկ բարձրությունը հինգ սառնենից փոքր ինչ ավելի։ Կան մի քանի արձանադրություններ, որոնցից հնագույնն է ԶԹ=1460 թվից։ Այժմ այս վանքը համարվում է գյուղի ծխական եկեղեցի և բավական խնամքով պահպանվում է։ Ս. Բարդախանյաց տունին շրջակա Լևուհի, Բիստ, Փառակա, Ցղնա և Ռամիս գյուղերից բազմաթիվ ընտանիքներ ուխտի են գալիս այս վանքը։ Իրենք մարվանցիները իրենց մեջ փող են հավաքում և հասարակական մատաղ անում։ Ահագին բազմություն միասին նստում է վանքի զավթի առաջ և ուտում հասարակական մատաղը։ Գյուղի բնակիչները թեն բնիկներ են համարվում և խոսում են Երևանի բարբառին մոտիկ մի բարբառով, սակայն Ս. Մեսրոպի մասին չեն պահպանել մի որեւէ ավանդություն։ Բոլորի գիտնցածն էլ մեր պատմագիրների հաղորդածներն են։

Ինչպես տեսանք, բավական երկար է խոսված գյուղի և վանքի նկարագրության վրա։ Բայց զմբախտարար ավանդության մասին շատ համառոտ և նույնիսկ բոլորովին անբավարար ձևով Որտեղի՝ ց է բազմած արդյոք այն տեղեկությունը, թե Մարվանիսն է եղել Մեսրոպի բնակավայրը և թե այստեղ գտնված եկեղեցին նույնիսկ Մեսրոպի հիմնածն է։ Արդյոք բուն ժողովուրդը պատմում է այսպիսի բան և ինչպես, թե արդյոք հատուկ անունների ստուգարանության վրա՝ է հիմնված «Մշակ» լրագրի 1904 թվի 84 համարում կա «Աղագրական կուրիտոներ» վերնագրով մի հոդված, որի լրացումն է հաջորդ 85 համարում «Նամակ խմբագրության», երկուսն էլ Լ. ստորագրությամբ (իմա՝ Լիո)։ Այս հոդվածներում ի միջի այլոց շոշափվում է վերի խնդիրը և դիտել է տրվում, թե Լավույանի տեղեկությունը հիմնված է միայն Ասրվանիս անվան ստուգարանության վրա, որ պարունակում է Մեսրոպ բառի առաջին երեք բաղաձայնները։ Հոգվածագիրը նկա-

տում է նույնպես, թե Մեսրոպ հետին ձև է և բուն անունն է Մաշտոց։ Ուստի եթե վանքն որ գյուղն էլ ունենային այնպիսի հնություն, որ վերագրվում է իրենց, անշուշտ այս Մաշտոց ձևից կազմված պիտի լինեին և ոչ թե Մեսրոպ ձևից։ Եզրակացությունն այն է, որ ավանդությունը, եթե երեք գյուղություն ունի, հետին և թերեւ շատ նոր ժամանակի բան է, հիմնված ետրենացու վրա։

Ո՛չ Լավայանի և ո՛չ էլ Լիոյի հոգվածում պատմական ցուցում չկա. ուստի հարկ համարեցի նորից պրպտել մեր մատենագրությունը և գտա նույն վանքի հիշատակությունը Հայսմավուրքում՝ մեհենի ժԳ, Ահա այս հատվածը. «Եւ իշխանքն ընդ իրեարս հակառակէին, զի ոմն կամէր տանել գտուրը մարմինն ի գաւառն Տարսնայ, որ ծնեալն էր և սնեալ, ի բնիկ դիւղն իւր ի Հացիկ։ Եւ այլ ոմն ի նախակերտեալն իւր վանս ի գաւառն Գողթան, որ զեռ ևս Մասրեվանք կոչի տեղին այն...»։

Ուրեմն ավանդության աղբյուրը Հայսմավուրքն է և վանքի անվան հին ձևն է Մասրեվանք։ Ըստ իս այս բառը ծագում է ավելի շուտ մասուր բառից քան թե Մեսրոպ անունից։ Հայսմավուրքի պատմությունը բազմաձև է հորենացուց (տե՛ս ցածրը, գլուխ ԺԳ), որ չկա Մասրեվանք անվան հիշատակությունը։ Կարելի է կարծել, թե պատմությունը մնացել է հենց Հայսմավուրքի խմբագրության ժամանակ և հիմնված է միմիայն կեղծ ստուգարանության վրա (մասուրը դարձնելով Մեսրոպ)։

§ 3

Մեսրոպ Գողթնում իր քարոզությունը կատարելուց և դպրոցներ հիմնելուց հետո՝ անցավ սահմանակից Սյունյաց նահանգը, որի համար իզուր են կարծում ոմանք, թե Մեսրոպի առաջին քարոզության ժամանակ վալեյել էր նրա այցելությունը, ինչպես ցույց տվինք վերը՝ գլուխ երկրորդ, § 7։

Այս ժամանակ Սյունյաց իշխանն էր Վադինակ, որ Կորյունի բառերով ուստուումս էր հնազանդութեամբ ընդունելով Մեսրոպին, մեծ ոգնություն ցույց տվավ սրան՝ իր առաջադրած նպատակի իրագործման համար։ Այս իշխանի ոգնությամբ՝ Մեսրոպ կարողացավ ման գալ ամբողջ Սյունյաց նահանգը, մինչև իսկ նրա ամենահեռավոր սահմանները, և հավաքեց հայ մանուկներ՝ իր հիմնած դպրոցում աշակերտելու համար։ Ավելի նոգ տարավ Մեսրոպ իր ընտրությունն անել նահանգի ամենից ավելի բարբառայ կողմերից. «առաւել զզաղանամիտ զվայրենագոյն զհիւադարարոյ կողմանցն»։ Որոնց վրա թափելով իր բոլոր խնամքները՝ կարողացավ

հասցեն կրթված կրոնավորներ, «և այնպիսի փայլի ի վերայ ունելով» և դաշնակարար ստորագրանել և խորտակել միևնույն ի նպոտն իսկ ի վաշտենացի եպիսկոպոս տեսալսն եկեղեցւոյն Սիւնեաց կարգելու և մեծն կսով բացվեցին դպրոցներ, փոխակառններ խմբերը ցրվեցին ամեն տեղ և հաստատվելով ուրիշ դպրոցներում՝ սկսեցին ստամ և կրթութուն տարածելու նահանգի կրոնավորների դալս և եկեղեցիների տեսուչ նշանակեց Մեսրոպ իր աշակերտներին լավագույնին, որի տնտես էր Անտոնիա կամ Անանիաս, որ նույն Սյունյաց նահանգի վարչներին էր և որի համար Կորյուն ասում է «այդ տարի և երեսի հայրաբարոյ ժողովաւորաց եկեղեցւոյս Այս Անանիայի համար Օրբելյան ասում է, թի Քննիւմիս անուն մի ուրիշ անձի հետ՝ Մեսրոպի բնորոյ աշակերտներին էին և նրա աստօջին այցելութեան ժամանակ նշանակված էին իրեն «Մարգման և ուսուցիչ»։ «Իսկ սուրբ այրն Աստուծոյ (Մեսրոպ)՝ խղիւղ անդ յաշխարհին Սիւնեաց թարգման և ուսուցիչը յընտրեալ աշակերտաց իւրոց զՔննիւմիս և զԱնանիա, (որ և ձեռնադրեցաւ յետոյ յեպիսկոպոսութիւն աշխարհին), ինքն դալ առ սուրբն Սահակ» (Օրբելյան, ԺԴ, էջ 38)։ Բայց թե Սյունյաց առաջին այցելութեան, հետեւաբար Քննիւմիս և Անանիայի առաջին նշանակումը ենթադրական են՝ ցույց տվինք արդեն վերը և նորից կրկնելու կարիք չկա։

Եստ որևորքամ է խոսում Օրբելյան Սյունյաց (ըստ իրեն երկրորդ և ըստ մեզ միակ) թարգմանի և եպիսկոպոսութեան հաստատութեան վրա, որի համար տալիս է նախաթոռ Հայոց Պատրիարքին՝ տիրողսր Ահա Օրբելյանի խոսքերը. «Սկն եհաս մեզ ճառել զցանկայի և զլաւագոյն իրաց, այսինքն զնորոգութենէ խաւարեալ և խոպանեալ եկեղեցւոյ մերոյ և արժողոյ մետրապոլիտութեան Սիւնեացի Փանդի ի վաղուց հետէ ոչ զոր տեսուչ և ուսուցիչ այսմ աշխարհի, յաւերմանէն Անգղիայ միեւն ցտըրութիւնն Վասակայ իշխանին, Իսկ ի հայրապետութեան Հայոց մեծին Սահակայ՝ մինչ կրկին նորոգել զՀայաստանեայս, և յամենայն տեղիս շրջել ուղղել և լնայր զկարգս եկեղեցւոյ, ձեռնադրեաց զԱնանիայ՝ զաշխարհաւ Մեսրոպայ, թարգմանիչ և ի ամենայն առարիւնութեամբ՝ յեպիսկոպոսութիւն Սիւնեաց, նստել ի դամետրապոլիտութեան և կոչիլ նախաթոռ Հայոց Պատրիարքին, որ եկեալ նորոգեաց զերկրտասան դատաս մեծապիճակ՝ զաւագանի իւրոյ Իսկ ի բոնեալ դպրութեանս Հայոց վերին պարզեօղն ի ձեռն սրբոյն Սահակայն Մեսրոպայ» և տ դպրատունս յաշխարհին Սիւնեաց, և կաշգեաց ի վերայ զաշակերտակիցն իւր զՔննիւմիս և փոխապէս դա-

մենեան ուսուց ճաշերէն դպրութեամբ, և տար զիտոցս տոտաւածալին կտակարանաց» (Օրբելյան, ԺԵ, էջ 38—39)։

Օրբելյանի այս պատմութեանը երևում է, թե Անանիա ամբողջ Սյունյաց եպիսկոպոս, իսկ սրա բնիկը Քննիւմիսը թուր դպրոցների տեսուչ նշանակեց, վերջինը ստորագրեց յատ կարտա է. սրա մասին ունենք առանձին դիտողութեան, որ տես դուրս ուրիշորդ, § 3։

Ուշագրութեան չենք տեսում բնով այն հանգամանքը, որ Օրբելյան Սյունյաց այս երկրորդ թարգմանի տալիս է ոչ թե Մեսրոպին, այլ սրա աշակերտ Անանիա եպիսկոպոսին։ Թե այս փոփոխութեան ճարպիկ մի խաղ է, որ Օրբելյան ձեռնարկ է, տեսանք արդեն վերը (դուրս երկրորդ, § 7) և նորից բնեկու կարիք չկա։

Մեսրոպ լավական ժամանակ մնացած պիտի լինի Սյունյաց նահանգում, այնպէս որ տեսով Վասակի Սյունյաց իշխանութեան դուրս տեղեկը՝ Վաղինակից հետո նորընտիր իշխանը՝ դեռ շատ հեռու այն պարսկասիրական քաղաքականութեանից, որ բռնել էր Վարդանանց պատերազմի ժամանակ, բարեպաշտ ու կրոնասեր մի անձ էր, այնպէս որ խոնարհ հայատակութեան ցույց տալով Մեսրոպին, ինչպէս որդին հորը, կատարեց ինչ որ Մեսրոպ պատշաճ էր համարում։ Հայտնի է Կորյունի տված երեսի գովանութր այս անձի վրա, որից հանված կտրեք հետեւութեանները Կորյունի դրութեան ժամանակի մասին, տեսանք արդեն վերը. «Յորում ժամանակի պարզեայ յԱստուծոյ, հասանել ի դուրս իշխանութեանն Սիւնեաց՝ քաջ Սիսականի Վասակ, այդ խորհրդական և հանձնարեց և յառաքիմաց, շնորհատուր իմաստութեամբն Աստուծոյ, Թաղում ինչ նպաստութիւն ցուցանել աւետարանագործ վարդապետութեանն, իրեն որդւոյ առ հայր՝ հպատակութիւն ցուցեալ, և ժողովեալ ըստ աւետարանին վայելչութեան. մինչ ի վախճան զհրամայեալսն ի գործ բերելը» (Կորյուն, էջ 15)։

§ 4

Սյունյաց նահանգում եղած ժամանակ, Մեսրոպ մտածում է նաև Վրաստանի դրական ու կրոնական յուսափութեան համար։ Այս երկիրն էլ դեռ գուրկ էր այն ժամանակ սեփական դրականութեանից, Մեսրոպ ժողովաւորի մի ժամանակ իր երկրի կարող գաւառների պահանջը, անցավ Վրաստանի կրթութեան հիմքը սեփական գիրք է. այդ շատ լավ դիտել Մեսրոպ. «ուստի մտածեց նախ և առաջ վրացերեն լեզվի աշուրներեն հմարելը կուր միջոց կար դրա համար. կամ հայկական աշուրներ փոփոխելով (այսինքն ամէկի ձայները հանելով և պակասները լրացնելով)»

տալ վրացիներին, և կամ հնարել բոլորովին նոր մի այրուրեն. Մնարոպ ընտրեց վերջինը. նա հնարեց վրացական այրուրենը, տվեց այդ գրեթե հայերենից տարրեր ձև, կարգավորեց ուրիշ շարքով, նշանակեց ընթերցանության օրենքները, և այսպես՝ հայերենից բոլորովին տարրեր մի այրուրեն ձևացնելով՝ պատրաստեց իր պնակիտը. «Առնայր (սկսեց) կարգեալ նշանագիրս վրացերէն լեզուին, ըստ շնորհնեցելոյ նմա ի Տեառնէ. գրէր կարգէր և օրինօք յարգարէր...»:

Մնարոպի այս վարժուների մեջ տեսնվում է այն վեճ զգացմունքը, որի համեմատ տաճկա ժողովուրդի և ամեն անհատ պարտավոր է պարզել մյուս ժողովուրդների ինքնությունը: Ազդակերությունը, որ արդի շատ հիփոթակահան պետությանց ազդայնական քաղաքականության հիմքն է կազմում, հեռու էր Մնարոպի պես մաքուր և ազնիվ անձի մտքից: Լուսավորությունը նա չկապեց նեղ շովինիզմի հետ. ցույց տվեց և բաց արեց առաջադիմության ուղիղ ճանապարհը՝ սեփական լեզվով զրականությունը:

Մնարոպ վրացերեն գրեք հնարեց Սյունյաց Նահանգում, և իր հետ առնելով իր լուսավազմ աշակերտներից մի բանիսին, որոնք անշուշտ սլոնեցի էին, անցավ Վրաստան: Այնտեղ ներկայացավ վրաց Բակուր Թաղավորին և Մովսես Կախիկապոսին: Բն՝ Թաղավորը, Թն՝ բանակիր և Թն՝ ժողովուրդը սիրալիր ընդունելություն ցույց տվին Մնարոպին, ինչ որ Կորյուն «հնազանդեալ» բառով է բացատրում. «Եւ՝ առանկադոյն՝ հնազանդեալ նմա բոա օրինացն Աստուծոյ՝ Թաղատրին և զօրացն, հանդերձ ամենայն՝ զաւստօրն» (էջ 15): Մնարոպ ցույց տվեց նրանց իր շինած վրացերեն գիրը (և նորա գիր արուեստն առաջի արկնալ): Բացատրեց թե ի՞նչպիսի մեծ օգուտ ունի սեփական զրականությունը. այնուհետև խրատեց և հորդորեց, որ բնդունեն այդ գրերը, սովորեն, տարածեն կրկրում և ուսման ու կրթության հոգ տանեն, ինչպես իրենց հարեան հայկական գավառներում: Բայց միայն տեսական խրատները բավական չէին. պետք էր գործնական օրինակով ճանապարհ բանալ: Ուստի Մնարոպ իր վրա վերցնելով նախաձեռնությունը, խնդրեց, որ աշակերտներ հավաքեն, իսկ ինքը պատրաստ էր կրթել ու դաստիարակել նրանց: Ամենքը համառվեցին և ընդունեցին առաջադրությունը. «Եւ նորա գիր արուեստն առաջի արկնալ՝ խրատէր յորդորելով, յորում և յանձն առեալ ամենեկուն զխնդրելին կատարելու: Բազմվորը հրաման հանեց և ահա Վրաստանի զանազան կողմերից ու զանազան պավառներից հավաքվեցին վրացի մանուկները, որոնց Թաղավորը հանձնեց Մնարոպին: Մնարոպ

բայ րաց արեց առաջին վրացական դպրոցը, նա գտավ Ջաղա անունով մի վրացի, որին Կորյուն կոչում էր «այր գրագէտ և ճշմարտահաստ»: Բայց չի իմացվում, թե այս անձը աշխարհական էր, թե հոգևորական: Վերջինը ավելի հավանական է. Այս անձը վրացի Թարգմանության պաշտոնը Մնարոպի և վրացի աշակերտների միջև, Կորյունը նրա համար պարգապիս ասում է «գայր մի Թարգման վրացերէն լեզուին», իսկ նորինացին՝ «հանդերձ Ջաղայի ոմամը Թարգմանալ լեւելն և հայ լեզուի»: Հայ լեզվի հմտությունը անտրանալի է, քանի որ Մնարոպի և վրաց միջև Թաղման է. բայց ստույգ է նաև հռեարեն լեզվի գիտությունը, ըստ որում Կորյուն կոչում է նրան «այր գրագէտ»: Հայ գրականությունը դեռ այնքան նոր էր, որ կարելի չէ նեթագրել, թե վրացի Ջաղան՝ էլ սովորած լինեք. ուստի մնում է հուշարենի հիմնությունը, որպեսզի արդարանա Կորյունի «գրագետ» բառը:

Այս անձի աշակցությամբ ահա Մնարոպ սկսավ իր ուսուցչական գործը և տյեքան կրթեց նրանց քրիստոնեական ուսման մեջ, որոշորովին թողեցին ու մոռացան իրենց հեթանոսական դիվապաշտությունը. «Ձոր առեալ արկանէր ի ըմփ վարդապետութեանն. և հոգևոր սիրոյն ետակրամը՝ զաղա և զժմիգ շարաւահոտ դիւացն և զսնտիւիագործ պաշտամանն ի րաց անջատեալ ի հայրենեաց իւրեանց՝ և անյիշատակ ցուցանել, մինչև ասիս՝ Բէ Մոռացայ զժողովուրդ իմ և զտան հոր իմոյս:

Մնարոպի բարոզչության մասին խոսում է նաև Ռիստանես (գիրք Բ, գլ. 8) շատ կարճ հիշատակությամբ. «Եւ տրդ մի՝ հեղապետը զսէր հոգևոր՝ որ կայր ի մէջ երկուց ազգաց (Հայոց և Վրաց) նորոգել. և զայն, որ ի միջէ ազգիւրէ առեալ է զվարդապետութեան, որ նախ ինքեանք առին զկենդանութեան լոյսն, որպէս ուսուցին մեզ մարդարէն և առաքեալն, և ապա ձեզ և մեզ սկսմանեցին առհասարակ զուղղափառ աստուածապաշտութիւն, նախ երանելին սուրբ Գրիգոր և ապա Մաշտոց»: Մաշտոցի անվան միակի հիշատակությունը Գրիգոր Լուսավորչի հետ և այն էլ վրաց լուսավորության գործում, ապացույց է, թե ի՞նչպիսի մեծ դնահատություն էր վաշելում Մնարոպ այն դարում:

Այսպես ուրեմն կարճ ժամանակում Մնարոպ կրթությունը տարածելով Վրաստանում՝ յիստոնեությունը պրապ տմուր հիմքերի

1. Յնաղյան (էջ 32) այս Ջաղա անունը կապում է հուրերգի բարբառի շուրս «մոնոլոգ» բառի հետ: Այս բառը հասարակ թրքերեն լեզու բառն է և բնավ ամենին կապ չունի ոչ հայերենի և ոչ էլ վրացերենի հետ:

մյաւ, Կորյուն, Բեթորայի այս պործին ընծաւ լում է նաև վրացոց ազգային տնտեսութեան տեսակետով շատ ավելի բարձր ու ցիւղաւոր մի ազգայնութիւն, ունի էլ բազմաթիւ բաժանութեան քեղերի նշանակաւ կառավարութիւններ։ «Այս ազգայնութիւնը, որ յայնչօքն ի մասնաւոր ու ի բաժանեալ լեզուացն ժողովեցան, միով աստուածարարաւոր պատգամօքն մի ազգ կապեալ փառարանիչք միոյ Աստուծոյ յարեցն» (Կորյուն, էջ 15)։ Այս բաժան-բաժան քեղերը տիտի լինելն բացի լում վրացիներէն՝ իմերէները, գորիսթիները, աշարացիները, մինգրիները, խեսարները, թուշներ, փշաւներ, ախսներ, ինգիլիներ, ինչպէս նաև յաղներ (վրացական անվանակոչութեամբ հայեր) և տրիապներ։ Կորյունի նշանակած միութիւնը անշուշտ ուրիշ բան չէ, եթէ ոչ, նախ՝ կրօնական, հոգեւոր միութիւն, իրիկ բոլորն էլ տեղամ միեւնոյն վրացական ազգային եկեղեցւոյ, և երկրորդ՝ լեզվական միութիւն, իրիկ բոլորն էլ զործածող միեւնոյն ծիսական լեզվի, որ պաշտօնական նշանակութիւնն էր ստացած և դրանք իրարմէր ասպարոված։ Վերջին կարծիքը հաստատում է վրացի գիտնական Բովսեւ Ճանաչվիկի (տե՛ս Զ. Գ. Բենեդիկտանի «Արդի լեզվագիտութիւններ», Վիեննա, 1903 թ., Ա. ատ., էջ 104—105), որից բազում են բացառացի հետևյալ տեղեկութիւնները. «Հայտնի է, որ ամենահին ժամանակները թէ՛ մինգրելները և թէ՛ ալանները, թէ՛ արխաղները, թէ՛ ռաւաթները՝ իրենց կրօնական պաշտամունքը վրացերէն լեզվով կկատարէին և առաջին երկու քեղերը մինչև հիմա ալ այսպէս կպատրիւն Այս բոլոր ժողովուրդներումնց պաշտօնական լեզուն պատմական ժամանակներէն, վրացերէնը կհամարվեր, որով կկատարէին իրենց գրաւոր փոխադարձ հարաբերութիւններն և կկազմէին ու կզրմէին տարեկրութիւնները, ինչպէս են՝ «Արխաղցոյ Յիսօվերու» (Արխաղիայի կյանքը), «Նդի-նակութիւն արխաղաց Բագրատ Գ (- 1114) իրաւաւորի, «Ազգութեանի» պատմական դուրսագիտութիւն (épopée) ու (կամ ռաւաթին) ժողովրդան... և Արխաղիայի, Ուստիայի, Չէնիայի և Գաղստանի տաճարներու վրայի արևանագրութիւններն ևայլն»։

Վրաստանի ամեն կողմը կրթական ու կրօնական կարգ ու կանոնի տակ դնելուց հետո՝ Բեթորայ հրաժեշտ է ապիս բոլորին և դառնում Հայաստան, հասնում է Վոդարչապատ մայրաքաղաքը՝ Սահակ կաթողիկոսի մօտ, որին հաշիվ է տալիս իր արած զործերի առթիւ։

Ե

Վրաստանի յաստիւրութիւնն այս պատմութեանը, որ պիտի, իր ամբողջ մանրամասնութեամբ միայն Կորյունն ունի. մյուս պատմագիրները կամ շատ համարտու են պատմում, կամ անունով միայն հիշում են տեղեկութիւն և կամ միայն իսկ բարձրագին հասկում են Վերջին անտիկից է հասկապեալ փառալցին, եթէ չհիշենք հետին պատմիչներին, Շատ համարտու են Փոքր Կորյուն և Մասնեցին. ասացիւք բարձրագին նոյն է խորենապա հետ, երկրորդը հետաքրքիր է վրացիներին տված ատարիկնակ անունով և նրանց դրերին ընծայած վրացիութեամբ. «Վասնորոյ պիմ է կազմանա Կազմանունեալ, այսինքն լաղինս Վրացուց, առն է նոցա տառ բաւային իրիկանց՝ զկազմէ և վայելուչ՝ թողլով ի մտեալիցն թարգմանա նոցա» (էջ 56)։

Իսկ խորենապա ընծայած տարբերութիւնն այն է, որ նախ՝ վրացերէն դրերի դուրսը եղած է զնում ո՛չ թէ Սյունյաց դաւաճում, այլ լում Վրաստանում, երկրորդ՝ այս գլուխին մասնակից է ուղում անել նաև Զաղաթարգմանին, և ձեռնառն՝ Բակուր թարգմանիւն Մովսէս եպիսկոպոսին. «Իսկ Բեթորայ երթեալ յաշխարհն Վրաց, առն է նոցա նշանագիրս տունեկունի ի վերուստ շնորհուն, հանդերձ Զաղաթի տմար թարգմանա հեղին և հայ լեզուի, ձեռնառն լինելոյ արքայի նոցա Բակուր, և եպիսկոպոսին Մովսէս» (Խորենացի, Գ ձգ)։ Նրան է հետևում նաև Վարդան պատմիչ՝ հետևյալ բառերով. «Այլ սրանչէի այսին Աստուծոյ Մարտալ անցեալ ի Վիրս, առն է նոցա դիրս, ի ձեռն Զաղեյի ունեմն, որ աշակերտեցաւ նմա» (էջ 51)։ Երրորդ նշանակում է, թէ Բեթորայ վրացի աշակերտների խումբը երկու դասի բաժանեց. առաջինը՝ անձնեց Տէր Խորենեացուն և երկրորդը՝ Մուշե Տարոնեցուն՝ ուսուցանելու համար։ «Այս քանակ մանկունա, և լեզուա բաժանեալ դասս, և վարդապետս թողու նոցա յաշակերտաց իւրոց զՏէր Խորենեացի և զՄուշե Տարոնեցի» (անդ)։

Առաջին տարբերութեան համար այն պէտք է նկատի ունենալ, թէ Խորենացին, ինչպէս շատ մանրամասն պիտի ցույց տանք, Բեթորայի երկրորդ, երրորդ, չորրորդ և հինգերորդ ժամբորդութիւնները իրար խառնելով՝ առանձին մի ձե է տալիս նրանց. այսպէս՝ երրորդ ժամբորդութեան միջից Սյունյաց նահանգը բարձրագին հանում է, իսկ Վրաց և Աղվանիք յաստիւրութիւնը, որանց յարաբանչարք տարբեր շրջանի գլուխ է, միացնում է մի գլխի մէջ։ Այս նախաձեռնութեան տակ Խորենացին էր կարող իհարկէ վրացական գրերի գլուխ տեղը նշանակել Սյունիք, և կարճ կապելու

համար ստիպված էր վրաստանը հիշել ու անցնել:

Երկրորդ տարբերությունը թյուրիմացության արդյունք է. ճշմարիտ է, թե Կորյունի պատմության համեմատ Զաղա, Բակուր և Մովսես օգնեցին Մեսրոպին, բայց նրանց գնությունը կայանում էր միայն աշակերտներ հավաքելու և ուսում տալու մեջ. ո՛չ մեկը չէր կարող օգնել Մեսրոպին վրացերեն գրերի պատրաստության ժախնակ, որովհետև, ինչպես տեսանք, գլուխը եղավ Սյուրիքում, որ չկային ո՛չ Զաղա, ո՛չ Բակուր և ո՛չ էլ Մովսես:

Խորենացու երրորդ տարբերությունը ներկայացնում է մի քանի մանրամասնություններ, որոնք կասկածելի են թվում ա՛յն պատմաո՞րի, որ նախ՝ ուրիշ աղբյուրներում չեն հիշատակված, երկրորդ՝ եթե Մեսրոպ վերակացու թողեց, այդ վերակացուն անշուշտ Զաղա թարգմանը պիտի լիներ, որ վրացի լինելով ամենահարմար անձն էր, և ո՛չ թե Տեր և Մուշե, որոնց Մեսրոպ իր հետ Գողթն էր տարել և որոնք հաղիվ թե վրացական լեզվին ծանոթ լինեին. ուստի և անհարմար լին վրաստանում վերակացու նշանակվելու: Երրորդ՝ ինչպես հրատարակիչները կարծում են, Տեր և խորենացին հիշվում է Փարսկեցու մեջ՝ իբրև Հայաստանում ապրած և այնտեղ նախանձոտ կրոնավորների հալածանքով վախճանված մի անձ. «Զհրեշտականման ալյոն զՏէր՝ նոյն անհանգիստ հալածանքով վախճանեցուցին, որք և այժմ զեռ ևս անյադութեամբ քրիստոլ ընդ մեռելոյն կազին» (Փարսկեցի, էջ 609): Սակայն այս վերջին պատմաո՞րի լինելու վրաստանում կասկածելի է, որովհետև ըստ Աբրահամ Զամինյանի (անձնական տեղեկություն) Փարսկեցու հիշատակած անձի անունը պետք է կարդալ «տէր Նոյն»:

§ 6

Վերջացնելու համար այս գլուխը, մեզ մնում է քննել մեր հայ աղբյուրների ստուգությունը. արդյոք ճշմարիտ և հավանական են այն տեղեկությունները, որ տալիս են սրանք Մեսրոպի առաքելության Վրաստանում և վրացերեն գրերը հնտրելու մասին. ի՞նչ ունեն այս մասին վրացական աղբյուրները և ի՞նչ կարծիքի են այժմյան եվրոպացի, վրացի և հայ նոր քննիչները: Աշխատությանս այս մասի պատրաստության համար իբր աղբյուր են ծառայել՝

1. Brosset, „Histoire de la Géorgie“, 3-րդ հատ., S. Petersbourg, 1849—59.

2. Müller, „Über den Ursprung der Gruzinschen Schrift“, SWAW 137, էջ 1—12.

3. Իսահակ Հարությունյան, «Հայոց գիրը», էջ 378—385, ուր ի նկատի են առնված զանազան եվրոպական աղբյուրներ.

4. Վրացի գիտնական Մովսես Զանաշվիլու մի դրությունը, որ հրատարակված է Հ. Գ. Մենեիշյանի «Արդի լեզվագիտության» մեջ (էջ 103—105).

5. Gerdthausen-ի աշխատությունը՝ ZDMG 40, էջ 79.

6. «Հանդես պատմության-ից փոքր մի հոդված՝ «Հայ գրականության վրացիության վրա ունեցած ազդեցությունը», 1899 թ., էջ 222—223, որ ամփոփում է Ն. Մատի հրատարակած ուսանելն «МѢС ПОРЯДКИ НА АФОНЪ» աշխատությունը:

7. Հ. Ն. Ակինյան, «Կյուրիտն կաթողիկոս», էջ 105.

Վրաց հին մատենագրությունը շատ ազդեցիկ է և համեմատելով մեր մատենագրության հետ՝ գոնե երկու դար ավելի ուշ է սկսած: Ինչպես մեր, նույնպես և վրաց լուսաշին գրական հիշատակարանը Ս. Գրքի թարգմանությունն է, որ մեր թարգմանության նման մի անդամից կատարված չէ, այլ մաս-մաս. այսպես՝ Ավետարանը թարգմանված է յոթերորդ դարում, իսկ Սաղմոսները 7—8-րդ դարում՝ հունարեն Տոթանասնից թարգմանության վրայից կատարված և հետո սլավոնական թարգմանության համեմատությամբ սրբագրված: Հակոբ Տյատնեղոր Պատարագամատուցը թարգմանված է 768 թվին: Կտրելի է կարծել սակայն, թե Ս. Գրքի թարգմանությունը կատարված է նախ հայ թարգմանության վրայից և կամ առնվազն այս վերջինը միշտ ի նկատի առնված է հունարենից թարգմանելու ժամանակ: Այս բանը ապացուցվում է ըստ Մատի՝ «հատուկ անվանց հայերեն ձևերին, հայերեն ոճերու դործածությունն» և այլն, զորս նույնիսկ բազմիցս կատարված Ս. Գրքի սրբագրությունը՝ չեն կրցած բոլորովին խափանելու Հայերենից են թարգմանված շատ վկայարանություններ, որոնց մի մասը բուն հայ աղագին սրբեր են. ինչպես Սանկուխտ, Ոսկյանք, Սուրիապյանք, Ս. Գրիգոր Լուսավորիչ և թողունք, ներսես Մեծ, Նահակ, Առուսյանք, Վարդան Մամիկոնյան, Շուշան, Դավիթ Դմիտրի և այլն: Արանով ցույց է տրվում, թե վրաց գրականությունը, ինչպես և աղագային թաղարական կյանքը, մեծապես կապված է եղել հարևան բախտակից հայ ժողովրդի հետ:

(Շ ա Ր Ո Ւ Ճ ա կ ե լ ի)



ԱՌԱՔԱՆԱԿՆԵՐ

(Հայկական ԱՌԻ Գիտությունների
վաստակավոր գործիչ)

Մ Խ Ի Ք Ա Ր Գ Ո Շ



Մխիթար Գոշր հայ մտավոր կույտության պատմության մեջ հանդիսանում է ավանավոր զեմերից մեկը: Նա հայտնի է իր իրավունքի առաջին Անակերպուղը և լավագույն անսարանք իրավունքի խնդրում, մյուս կողմից՝ որպես տուսկագիր: Մխիթար Գոշն զբաղվել է իրավունքի խնդրով և առաջինը տվել հայ ժողովրդին զբված օրենք. նա չի ուսումնասիրել հայ իրավունքը, նրա սոցիալական բնույթը: Հայկական իրավունքը Մխիթարից առաջ նույնպես ուսումնասիրության առարկա չի դարձել, ինչպես և Մխիթարից հետո էլ երկար ժամանակ անուշադրության է մատնվել:

Հայկական իրավունքի առաջին հետազոտությունը կատարել է Վահան վարդապետ Բաստամյանը մի ընդարձակ առաջարանի մեջ (180 էջ), որը կցել է Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» 1880 թվականի հրատարակության այս վերնագրով՝ «Մխիթարայ Գոշի Դատաստանագիրքը Հայոց, իրաւարանական հետազոտութիւնը հանդերձ ծանօթութեամբ»: Բաստամյանի այդ «յառաջարանութիւն»-ը տպվել է առաջ, ինչպես հազորդում է հեղինակը, «Փորձ» ամսագրում, 1879 թվականի X, XI, VI, VII — VIII և IX-ում: Այս առաջարանում հեղինակը դրում է, որ (և հաստատել հայերն ունեցել են իրենց ինքնավարության օրենքները և այդ օրենքները կազմելիս օգտագործել են Գոշի Դատաստանագիրքը և ներկայացրել Սիդիսմունդ թագավորին, որը հաստատել է 1519 թվականին: Սիդիսմունդի հաստատած օրենսդիրքը կրում է հետևյալ վերնագիրը. «Օրենքներ հայոց իրավանց, (և.

հաստանի րարեպաշտ Սիդիսմունդ առաջին թագավորից հաճանութուն ստացած և նրա հրամանով հաստատած, և նրա թագավորական մեծության հրամանով նրանց մայրենի լեզվից լատիներեն թարգմանած և բնագրից ուղիղ ընդօրինակած»: Բաստամյանը հայտնում է այն կարծիքը, որ մինչև Մխիթար Գոշը հայությունը չի ունեցել աշխարհական օրենսդիրք կամ դատաստանագիրք: Հեղինակն այնուհետև ցույց է տալիս, թե ե՛րբ և ո՛վքեր սգտագործել են Դատաստանագիրքը: Մխիթարից հետո էլ մինչև Սմբատ Գունդստաբլը ոչ ոք փորձ չի արել և չի մտածել «հորինել նոր ազգային սեփական օրենսդիրք կամ դատաստանագիրք կամ խմբագրել ժողովածու: Հիմն հայկական օրենքներից և իրավաբանական ավանդություններից»: Մխիթար Գոշի նույն Դատաստանագիրքն օգտագործել է Սմբատ Գունդստաբլը իր Օրենսգրքի 2-րդ մասում և հերքվում է Մկրչյանի այն կարծիքը, թե Գունդստաբլը թարգմանել է Անտիոքի օրենքները: Մխիթար Գոշի դատաստանագիրքը օգտագործել է Քարթլի-Ջախի թագավոր Վախտանգ Գ-րդը, 18-րդ դարում նա հաքինել է Վրացերեն լեզվով օրենսգիրք, որ կոչվել է «Սամարթիս ծիզնի վախտանգ մեփիսա» («Դատաստանագիրք Վախտանգ թագավորի») խորագրով: Բաստամյանը այսպես է բացա-

1. «Մխիթարայ Գոշի Դատաստանագիրքը Հայոց», էջ 26:

2. Նույնը, էջ 52:

3. Նույնը, նույն էջը:

4. Նույնը, էջ 58:

տրում վախտանգի այդ քայլը. «Կամենալով մի կողմից ավելի շատ նյութեր ունենալ ձեռքի տակ, մյուս կողմից՝ տալ Վրաստանի մեջ բնակվող բազմաթիվ հայերին նոցա կյանքին և ապրուստի մեջ համար օրենքներ՝ վախտանգ թագավորը խնդրեց էջիսանից հայոց օրենքներ և թարգմանել տալով վրացերեն՝ մոծեց նոցա յուր Սամարթիս ձիգնի դատաստանագրքի մեջ իրեն առանձին ամբողջ երրորդ մասին»:

Բաստամյանը տալիս է իր եզրակացությունը, որ Դատաստանագիրքը չի կարող դիմանալ դիտական քննության, բայց սրա նշանակությունը մեծ է որպես հայ մատենագրության մեջ միակ իրավաբանական գործածք: Գունգուսարյի նշանակությունը հենց այն է, որ նա առաջինը թողեց հայ գրականության մեջ գրավոր կոթող հայ հին իրավունքի մասին:

Հայ գրականության մեջ Բաստամյանից հետո այդ ուղղությամբ լույս են տեսել մի շարք գրքեր: 1894 թվականին Ս. Բահաթրյանը հրատարակել է «Հռոմային և անձնական իրավունքը հին Հայաստանում», 1903 թվականին Շուշում լույս է տեսնում «Հայոց եկեղեցական իրավունք» ուսումնասիրությունը, ապա և Սամվելյանի մի շարք ուսումնասիրությունները՝ 1905-ին — «Գնմամբ ու առևժանդմամբ ամուսնություն», 1907-ին — «Մխիթար Գոշի Դատաստանագիրքը և հին քաղաքացիական իրավունքը», 1910-ին — «Հայ ժառանգական իրավունքը» և 1939 թվականին — «Հին հայ իրավունքի պատմություն» (Արմֆանի հրատարակությամբ), Առանձն եպիսկոպոս Ղլտեյանը 1913 թվականին հրատարակում է «Հայոց հին իրավունքը» գիրքը, իսկ 1918 թվականին լույս է ընծայում Սմբատ իշխանի «Դատաստանագիրք»-ը, կցելով 8 էջից բաղկացած առաջարան: Ղլտեյանն այստեղ հերքում է գերմանացի կարստի թյուր կարծիքը Սմբատի Դատաստանագրքի մասին, որպես թե Սմբատի այդ գիրքը փոխառություն է ստար աղբյուրներից՝ ասորականից, բյուզանդականից և այլն: Ղլտեյանը այն կարծիքին է, որ թե՛ Սմբատը և թե՛ Մխիթար Գոշը իրենց Դատաստանագրքերը կապվելիս օգտագործել են «Հայոց Կանոնագիրք»-ը, որ գոյություն է ունեցել ավելի վաղ, քան Գոշի աշխատությունը: Մյուս կողմից Ղլտեյանը մերժում է Գոշի աղբյուրությունը Սմբատի վրա:

Բացի հայերեն ուսումնասիրություններից, լույս են տեսել նաև ռուսերեն և օտար լեզու-

ներով աշխատանքներ հայ իրավունքի մասին:

Ռուսերեն աշխատությունները, որոնք շատ են, մեծ մասամբ պատկանում են հայ հեղինակի գրչին և շատ անհշան շափով՝ ռուս իրավագետի Այսպես՝ 1870 թվականին լույս է տեսել Այսպեսի «Армянский судопроизводство» գիրքը, որի մեջ նույնպես ռուս հեղինակը հայտնում է նույն կարծիքը, թե հայ իրավունքը թարգմանություն է Հուստինիանոսի օրենքներից: Ռուս հայտնի իրավաբան Ն. Կովալևսկին 1890 թվականին հրատարակել է «Закон и обычай на Кавказе» գիրքը, որի մի գլուխը («Влияние армянского и греческого права») նվիրված է հայ իրավունքին: 1919 թվականին լույս է տեսել Ս. Նդիազարյանի «Исследования по истории армянского права публичного и частного» գիրքը, որ վերաբերում է 10—13-րդ դարերի հայ սոցիալական կյանքին և իրավունքին, է. Մելիքսեթբեկը հրապարակել է «Об источниках древне армянского права» և և Սամվելյանը՝ «Очерки по бытовому семейному праву армян» 1901 թվականին: Ռուսերեն լույս են տեսել անցյալում հոգվածներ Մխիթար Գոշի մասին «Юридическое обозрение» ամսագրում «Семеновские приговоры по Мхитару Говше» (Ս. Արծրունու) և «Судебник Мхитаря Говша» (Ն. Տեր-Հովհաննիսյանի): Ռուսերեն լույս է տեսել նաև «Հայոց կանոնագիրքը» և «Судебная книга Мхитаря Говша и книга каноников» գիրքը:

Հայ իրավունքը հետազոտել են նաև օտար գիտնականներ: Առաջին անգամ Բիները, գերմանացի մի գիտնական, մի աշխատանք է հրապարակում հայ և վրացական օրենսգրքի մասին: Այս աշխատանքը վերաբերում է վախտանգի դատաստանագրքի մասին 1829 թվականին Փարիզում ֆրանսերեն հրատարակված տեղեկություններին: Հայ իրավունքի մասին հետազոտություն է գրում Ֆ. Բիշոֆը: Ինչպես հաղորդում է Բաստամյանը, դոկտ. Ֆերդինանդ Բիշոֆի այդ գիրքը, որ կրել է «Das alte Recht der Armenier in Lemberg» («Հին հայ իրավունքը Լեմբերգի հայերի խորագիրը և լույս է տեսել 1862 թվականին Վիեննայում, հրատարակվել է լեհական Սիդիսմունդ թագավորի հաստատած լեհաստանի հայության օրենսգրքի մասին: Բաստամյանը, ինչպես վերը նշեցինք, ցույց է տալիս, որ Լեմբերգի հայերը կեն առ կեն օգտագործել են Գոշի Դատաստանագիրքը և հերքում է Բիշոֆի այն թյուր կարծիքը, թե Սիդիսմունդի կողմից հաստատված լեհաստանի հայության օրենսգրքը մեծ մասամբ փոխառություն է Հին և Նոր Կտակարանի:

8. Վահան վրդ. Բաստամյան — «Մխիթարյան Գոշի Դատաստանագիրքը Հայոց, յառաջարանություն», էջ 104 — 105:

9. Նույնը, էջ 180:

րից՝ Բաստամյանը պոխտարակում է նաև Հ. Լոնգինյանին, որը «հանձն չի տուկ մի քիթի աշխատություն» գրել և ջուլց առաջ գերմանացի գիտնականի այդ սխալը Բիշոֆի սխալը մերկացնում է Կրիզսը Արմենիին, որը «Հայկական աշխարհ»⁷ ամսագրում տպած իր մի հոդվածով հայտարարում է, որ Լոնգինյանի (և հաստատ) հայերի ինքնավարության օրենքները քաղված են Մխիթար Փոլիցի «Բեպետ» գրքում է Բաստամյանը, — պ. Արմենիին միայն սրբից բաժն կտրծիրք է Կաղարդում, բայց և այնպես այդ կարծիքը շատ հիմնավոր է⁸։

Հայ իրավունքի փոխառնվածության այդ տերնությունի գրայթը կրկնում է գերմանացի մի ուրիշ իրավագետ՝ Հ. Կոհերը, որը 1888 թվականին հրատարակում է „Das Recht der Armenier“ (աշխարհի իրավունքը)։ Իսկ 1906 թ.՝ „Alt-yrak-h-y und armenisches Recht“ (աշին սիրիական և հայկական իրավունքը) աշխատությունները, որոնց մեջ հայ իրավունքը համարում է փոխառնություն ստոր ժողովուրդներից։ Նույն ազով և ուղղությամբ հայ իրավունքը ստանձնադրել և Կալիկ Մյուլլերը և Վ. Աղապիցները, որոնք Փոշի Կատառնապիքը համարում են փոխառնություն Մովսիսականությունից և Բալմուդից։ Առաջի աշխատությունը կրում է „Das Musaische Receptenrecht in armenischen Recht“ (1906, Wien) խորագիրը, իսկ Երկրորդին՝ „Beitrage zur musaischen Reception in armenischen Recht“ (1906, Wien) խորագիրը։

Յո՛ւ. Կարստը հրատարակել է Երկու աշխատություն հայ իրավունքի մասին. առաջինը 1905 թվականին, Սմբատ Փոնդատարի օրենսդրության մասին, „Sempadis hen kodex aus dem XIII Jahrhundert“ երկրորդը՝ 1906 թվականին՝ „Grundriss der Geschichte des armenischen Rechts“ վերնագրերով։ Յո՛ւ. Կարստը այս աշխատությունների մեջ հետևում է վերը նշած գերմանական իրավագետներին և հայ իրավունքը համարում սոսկ փոխառնություններ ասորականից, մովսիսականից, բյուզանդականից և այլն։

Հայ իրավունքի հետազոտման ուղղությամբ աշխատանքներ կատարվել են նաև ֆրանսիական գրականության մեջ. հայ իրավագետների հաղորդմամբ այդ կարգի գիտնականներ են համարվում Ռ. Դարեստը

(1887 թ.), Կ. Բասմաչյանի «Հայ իրավունքը սկզբից մինչև մեր օրերը» ֆրանսերեն աշխատությունը (1901 թ.)։ Հայտնի են նաև Կ. Դյուլյուրիևի և Վ. Լոնգյուայի աշխատությունները։ Դյուլյուրիևն շարադրում է Կիլիկյան հայ իշխանությունից պետական կառուցվածքի մասին գիրքը, որը կրում է „Etude sur l'organisation politique, religieuse et administrative du royaume de la petite Arménie au temps des Croisades“ վերնագիրը։ Երկրորդը վերնագրված է „Le trésor des Chartes d'Arménie au Chancelier de la chancellerie royale des Rupénliens“։

Գրքում հեղինակը գնահատել է Կիլիկիայի Բագափորական փովերայրերի պատճենները, որոնք կապ ունեն ալե ժամանակի ասորական կամ այլ բնույթի դաշնագրերի հետ⁹։ Դարեստի և Բասմաչյանի աշխատությունները սույնպես հիմնված են փոխառնության տերնությունի սկզբունքի վրա։

Մխիթար Փոշի Կատառնապիքի մասին խոսելով, Կ. Սամվելյանը նմանապես պաշտպանում է ևստոր գիտնականների վերը բերած փոխառնության տարամերժ և անսկզբունքը կալումը շեշտելով, որ Մովսիսական օրենքները մուսար են պործել այ միայն Փոշի գրքի մեջ, այլև պրանից առաջ «հայ կրոնական իրավունքի մեջ... և կեղեցական ժողովների կանոնական որոշումներում»¹⁰։

Չի կարելի համաձայնել հայ իրավունքի ինքնուրույնությունը բացասող այն կարծիքների հետ, որոնք հայ իրավունքը հռչակում են փոխառնություն ասորականից, բարեյականից, մովսիսականից, բյուզանդականից և այլն։ Ո՛րչոտ չի լինի մտածել, որ տոհմային հասարակության իրավական նորմերը պահպանվել են և կիրառվել դասակարգային հասարակության պայմաններում, այն էլ 12-րդ դարում։ Պատմությունից հայտնի է, որ ասորականության ժամանակի հույները պայքարում էին հնացած ու մեղած տոհմային հասարակության սովորույթների դեմ. նույն իսկ այդ պայքարն արտացոլվել է զեղարվեստական զբաղանդության մեջ. Էսքիլեոսը իր «Նեդրաշիտներ» ողբերգության մեջ դատապարտում է մերձավոր ամուսնությունը, որ տոհմային հասարակությունից ժառանգություն էր մնացել ասորականության հասարակության և Կիսթենեոսը իր «Նեֆոսներով» վերջ գրեց տոհմային հասարակարգի մեղադրանքներին։ Եթե հասարակությունների մեջ պահպանվում են բարոյական որոշ համանման

7. Վահան վրդ. Բաստամյան — «Մխիթարայ Փոշի Կատառնապիքը Հայոց յատարանութիւն», էջ 26։

8. «Հայկական աշխարհ», 1970 թ., X-XI հ. 6-8 (միացյալ)։

9. Վահան վրդ. Բաստամյան — նույնը, էջ 76։

10. Պոշի. Կ. Սամվելյան — նույնը, Երաժշտական, էջ 12—13։

11. Նույնը, նույն անգամ, էջ 25։

նորմեր, այդ դեռ չի կարելի բացատրել փոխառությունն տեսություններ Գողթությունը դատապարտվել և դատապարտվում է բոլոր հասարակությունների մեջ. և ընթերցողը դատապարտելի տիրապետության ժամանակ օրենքների ժողովածուների մեջ գոյություն ունեն «ընթերցողը գողության դեմ, այդ դեռ չի նշանակում, թե այդ պետական իրավական նորմը ժառանգություն է մոլորականներից, իրավական նորմերի միջև նմանությունն անխուսափելի է, որովհետև ժողովուրդներն ապրել և ապրում են դատապարտության հասարակության համանման պայմաններում, Հոռոմեական իրավունքը դարձավ հանրաճանաչ հին հասարակությունների համար, որովհետև նա հարազատորեն գրեթե հոռոմեական մասնավոր սեփականատիրական հասարակության կենսական պայմանները, այնպես, որ հետագա դարերի մասնավոր սեփականատիրական իրավակարգերում անհրաժեշտություն չի զգացվել որևէ բարեփոխություն Այսպիսով իրավական նորմի նմանություն կարելի է ընդունել համանման հասարակական պայմաններում, իսկ անհամապատասխան է ստրկատիրական իրավակարգի իրավական նորմերի կիրառումը տոհմային հասարակության մեջ, կամ տոհմային իրավակարգի օրենքները ֆեոդալական հասարակության մեջ:

Հայ ժողովուրդն ունեցել է թե՛ սովորույթի (անդիր) և թե՛ դրավոր օրենքներ, ինչպես բոլոր ժողովուրդները՝ ասորիները, պարսիկները, հույներն ու բյուզանդացիները, Հունական և բյուզանդական օրենքները կոչվել են հոմոսներ, Հայկական օրենքը և հունական հոմոսն ունեցել են նույն իմաստը: Հայությունը, ինչպես ցույց է ապրիս հայ իրավունքի ուսումնասիրությունը, մինչև 12-րդ դարը չի ունեցել հայկական օրենքների ժողովածու, բայց ունեցել է դրավոր օրենքներ: Ընդհանուր նորմերն ափսոսաբար չեն պահպանվում և գրավոր օրենքների գոյության փաստը Հայաստանում: «Այլ ոչ արդարև այսօրիկ կարձեցեալ լինի, քանզի դասին և միջոցք չեալ պատեալազման, և զիս պարսից և յունաց, որովք այժմ դիզից և զառառաց ևս և իւրարանշիրտանց առանձնականութեանց, և հանուրց հա. կառակութեանց և դոշանց այժմ առ մեզ դասին անբաւ գրուցսց մատենք»¹²:

12. «Բայց իրավաբան չի լինի այսպես կա բժշկը, որովհետև պատեալազման միջև եղել են և մասնականութեւնքներ, և կային պարսից և հունաց դերք, որոնցով զրկած այժմ դանկում են մեզ մոտ անթիվ բանականութեամբ գրութիւններ, վերարեքայ գրութիւն և զովանների և յուրարանշիրտ անեղի սեփականութեամբ, և բոլորանուր վեճերի և պայքարների, մանավանդ սեպուսական ազնվականութեան մագման» (Թարգմ. Սոս. Մայիսյանի):

Օրենքի. կանոնի գոյության մասին հիշում է նաև Փալատոս Բյուզանդացին իր պատմության շորտորդ գլխից՝ 3-րդ գլխում, երբ խոսում է ներսես կաթողիկոսի նախաձեռնությամբ Աշտիշատի ժողովում սահմանած օրենքների ու կանոնների մասին. դրանք որոշումներ են, որ վերաբերում էին թե՛ աշխարհիկ և թե՛ կրոնական կարգերը բարեկարգելու. «կարգեցին, կազմեցին, կանոնեցին, յօրինեցին»¹³ և այլն:

Թեև հին Հայաստանում մինչև 12-րդ դարը չի եղել աշխարհիկ իրավաբանական աշխատություն կամ օրինագիրք, բայց և այնպես սահմանվել են զրավոր կանոններ և օրենքներ, որոնցով ղեկավարվել է կյանքը: Այդ օրենքները մշակվել են հատուկ ժողովածուներում և արձանագրվել ու կիրառվել կյանքում: Այդ ժողովների մեջ հնագույնը Աշտիշատի ժողովն է, որ տեղի է ունեցել 365 թվականին (մ. թ.), այնուհետև այդպիսի ժողովներ եղել են Շահապիվանում 443 թվ. կանին, Դվինում 555 և 648 թվականներին, Պարտավում 768-ին, Ստամ 1243 թվականին, Ջաղավանում 1270 թվականին և այլն: Այս ժողովներին, որոնք հրավիրվել են հոգեորդականության նախաձեռնությամբ, մասնակցել է նմանապես հայ աշխարհիկ ավագանին, Իրենց արտաքին բնույթով այս եկեղեցական ժողովները սահմանել են ոչ միայն կրոնական-եկեղեցական, այլև աշխարհիկ կյանքին ու կենցաղին, հասարակական հարաբերություններին վերաբերող կանոններ, որոնք «րենքի ուժ են ստացել և գործադրվել»:

Այս կանոնները 3-րդ դարում ժողովում և օրինագիրք (կանոնագիրք) է կազմում Հովհան Օձնեցին (717—728 թ. թ.), Ինչպես ցույց է ապրիս Խ. Սամվելյանը, Հովհան Օձնեցուց հետո հաջորդ դարերում ավելանում են նոր կանոնագրություններ նրա կազմածի վրա: Կանոնական հավաքածուի «մեր կանոն» և ստեղծում 10—11-րդ դարերի վերջերին¹⁴:

Այս նշանակում է, որ մինչև Գոշի հատաստանագիրքը Հայաստանում գոյություն են ունեցել դրավոր օրենքներ, թեև ուղղորդված համարվում ընդհանուր օրենքագրության, հայկական կողմից¹⁵ կամ իրավաբանական աշխատություն, ինչպես դրում է Մ. Արեղյանը¹⁶:

13. Ընդգծումներն իմն են: Խ. Սամվելյանը «Յարեհեդին» բառի ստուգաբանությունից (օրենք) կլեկով ու աշխարհում է այդ բառը հասկանալ «օրենքաբան» իմաստով, իսկ Սոս. Մայիսյանը գտել է զղել «շարժվել» և թարգմանել է «կարգ ու կանոն սահմանել»-ին, կազմակերպել (Փալատոս Բյուզանդ. Թարգմ. Սոս. Մայիսյանի, Երևան, 1947 թ., էջ 141):

14. Պրոֆ. Խ. Սամվելյան. նույնը, էջ 16:

15. Նույնը, նույն տեղում, էջ 73—74:

16. Մ. Արեղյան. նույնը, հատոր 1, էջ 145:

Ինչո՞ւ Հայաստանում չի կազմվել աշխարհիկ բնոյ հանուր օրենքների մի ժողովածու, այլ զեկափարվել են փերը նշված եկեղեցական ժողովների կանոնադրություններով, ինչ երևույթը պետք է բարձրորդել նրանով, որ Հայաստանում գոյություն չի ունեցել համակենտրոնացված ուժեղ միապետական իշխանությունը նրկիկը բաժանված է եղել քաղաքական մասեր իշխանությունների— նախարարությունների, նույնիսկ 10—12-րդ դարերում գոյություն ունեին մի քանի մանր թագավորություններ, ինչպես Վասպուրականի (963—1065 թ. թ.), Մյուսիքի (970—1170 թ. թ.), Տաշիր Զորացեան, որի գոյությունը տևեց մինչև 10—13-րդ դարերը, ինչ կենտրոնափույս ֆեոդալական իշխանությունները ներկայացրել են զրեթե ինքնուրույն պետական կազմակերպություններ—պետություններ պետություն մեկ, ունեցել են զեկափարման իրենց պատարանը, օրենքները և այլն, Պետական այս կառուցվածքի մեջ տնտեսականության չէր զգացվի բնոյ հանուր պետական օրենքների, հանուրաւ և այդպիսի օրենքների ժողովածուի, Հոմեր նրատուրակեց օրենքների առաջին ժողովածուն՝ *corpus juris*-ը, բյուզանդական կայսրությունը Հուստինիանոսի սրով հրատարակեց իր օրենսդիրը, որովհետեւ դրանք ներկայացնում էին ուժեղ կենտրոնացված պետություններ և յույնաժափով այդ պետությունները կառավարելու համար բնոյ հանուր պետական օրենքների կարիքն զգացվեց, Հարց է ծագում, իսկ ինչո՞ւ օրենսդրի կարիքն զգացվեց 12-րդ դարում, երբ հայությունը գտնվել էր պետական իշխանությունից և հենց այդ ժամանակ հանդես եկան Գափիթ կապիկար որդու և Մխիթար Գոշի դատաստանագրերը՝ Հայաստանը գտնվում էր օտար տիրակալների՝ սելյուկների տիրապետության տակ, որոնք հայերի՝ որպես «դավաճանների» դատը չէին վարում և զրա հետևանքով զատավորներն առաջատ չէին լինում դատավարության ժամանակ, ինչպես Գոշն է գրում նախարանում, Հայերն զգում էին իրենց օրենքներն ունենալու և դատական գործերն այդ օրենքներով զեկափարելու պահանջը, Այդ պահանջն զգացվում է ինչպիսիքիայում և թե՛ Արեւելյան Հայաստանում, որտեղ այդ ժամանակ կազմակերպվել է Զարայանների իշխանությունը վրաց թագավորների հովանավորության տակ:

Համանման պահանջ զգացվում է նաև Կիլիկիայում, որտեղ կազմակերպված էր հայկական իշխանությունը, Այստեղ կարող էր զեր խաղալ նաև Կիլիկիայի հայության տնտեսական-կուլտուրական հաղորդակցությունն արեւմտյան ժողովուրդների հետ:

12-րդ դարում Գափիթը, Մխիթար Գոշը և Ռմբատ Գանդատարը հանդիսանում են հայ իրավունքի անդրանիկ շարադրողները, իսկ ներսես խմբրանային՝ օտար օրենսդրի առաջին թարգմանողը:



Մխիթարը Գոշ է կոչվել, որովհետեւ նրա միտքը այդ էր բուսել (հրանդի հեղադրել էին այդ նորա¹⁷), նրա մասին տեղեկություն հաղորդում է 13-րդ դարի պատմագիր Կիրակոս Գանձակեցին՝ Գանձակ քաղաքից էր Գոշը, «Հայկատուն այն և մեծիմաստն զիստիկամբ»¹⁸, Մնացեալը նրան տալիս են ուսման, իսկ էր արքունիքի է հասնում, նա ձեռնադրվում է կուսակցուն չա՛նաւ, Ուսման ծարավը հաղեցնելու նպատակով դնում է համար Հովհաննէս զիտնական վարդապետի մոտ, բայց չի բավարարվում և մեկնում է Սե Լեոնի վանքը և սովորում ռուսոյիչների մոտ, ապա դնում է Կարթի և այստեղ ծանոթանում Բուրի իշխանի հետ, որը հովանավորում է նրան, Կարթինից վերադառնում է Հայաստան և զրազմում զիստիկամբ, նրա իմաստության համբավը տարածվել էր ամենուրեք, այդ պատճառով շատ աշակերտներ զայիս էին նրա մոտ սովորելու, Բայց տաճիկները նկատում են Մխիթարին Ազգանից կաթոլիկոսի թեկադրադով, ուստի նա հետնում է հույն զավատի Հալկերը, սակայն լսելով Բուրի իշխանի վերադարձի մասին Մխիթարը Հալկերից հեռանում է և բնակվում Քուրի իշխանի կալվածում, Կույն զավատի Գետիկ վանքում, Ազատն զետի վրա, Սաստիկ երկրաշարժի պատճառով Գետիկը խարխվում է և Մխիթարը Բվանն իշխանի սմանդակությամբ հանձնատի ձորում ձեռք է բերում տեղ և կառուցում նոր վանք, որ կոչվում է նոր-Գետիկ, Այստեղ ապրում ու զիստիկամբ է զրազմում Մխիթարը և սովորեցնում շատ աշակերտների, նա մեռնում է այստեղ, հասնելով խորին ձերություն, Հայոց ՌԿՔ (662), այսինքն մեր 1213 թվականին¹⁹, Սակայն հայտնի չէ Գոշի ծննդյան թվականը, Մ. Արեւելյանը, հիմնվելով պատմագրի այն հաղորդման վրա, թե Գոշը մեռել է խորին ձերություն հասնելով (այսինքնայն) և չի աւուրքը— Կիրակոս Գանձակեցի, (չ 207), ենթադրում է, թե մեռած պետք է լինի 80—85 տարեկան հասակում և զրա հիման վրա նրա ծնունդը համարում է 1130 թվականը:

17. Պատմության Հայոց պատմագիր Կիրակոս վարդապետի Գանձակեցի, Քիշին, 1903 թ., էջ 263:

18. Նույնը, էջ 193:

19. Նույնը, էջ 193, 200 և 207:

Գոշը թողել է չեղանկյալ աշխատությունները, որ հիշում է Կիրակոս Գանձակեցին իր պատմության մեջ (էջ 208—209-ում)։ «Համառոտ մարգարէութիւն նրեմիայի», «Սուղ ինչ կանոնս սպասաւորելոյ մարմնոյ և արեան Տեառն», «Ողորդ ի վերայ բնութեան», «Յայտարարութիւն ուղղափառութեան հաւատոյ ընդդէմ ամենայն հերձուածողացու Նոթողել է նաև «Դատաստանադիրք» և «Առակք» աշխատությունները, որոնք ամենաարժեքավորներն են նրա ստեղծագործությունների մեջ։

Դատաստանադիրքի Էրիշտ վերնագիրը չեղանկյալ է։ Մխիթարայ Գոշի Դատաստանադիրքը Հայոց»։

«Դատաստանադիրք»-ը բաղկացած է երեք մասից. առաջինը վերնագրել է «Նախադրութիւն», երկրորդը՝ «Նկնդեցական կանոնք», իսկ երրորդը՝ «Աշխարհական յօդուածք»։ Նախադրությունն ունի 11 գլուխ, երկրորդ մասը՝ 124, իսկ երրորդը՝ 130 գլուխ։ Նախադրության առաջին գլխի մեջ թվում է 12 կես, որոնցով հիմնավորում է դատաստանադիրքը շարադրելու պատճառները։ Դրանց մեջ հիմնականը Մխիթար Գոշը համարում է հայերի և մահմեդականների միջև եղած տարբերությունը և մահմեդականների բամբասանքները, թե քրիստոնյաները դատաստան չունեն։ «Բամբասանն զօրէնսն Քրիստոսի, թէ դատաստան ոչ կայ ի նմա», իսկ հայերի մեջ շատերը զովում են մահմեդականներին, որովհետև նրանց օրենքն ու դատաստանն արդար են («բարդումք են, որ զովեն դալլալ-գիս, որսլէս թէ իրաւացի դատաստան ունին»²⁰)։ Տասներկու պատճառաբանությունների մեջ ուշադրության արժանի կես է ութերորդը, որի մեջ նշում է նպիսկոպոսների, վարդապետների, քահանաների, իշխանների և աշխարհական մեծերի աշառությունը, կաշառակերությունը և տգիտության հետևանքով ուղիղ դատաստանը խնդաթյունը (ո՞րմանք յնպիսկոպոսաց և ի վարդապետաց և ի քահանայից և ի գլխաւոր աշխարհականաց և իշխանաց, զի աշտոանսր և կուշաոք և տգիտութեամբ թիրեւն զուղիղ դատաստանն»²¹)։

Այս հանգամանքների վրա ավելանում են Ալվվանից Ստեփանոս կաթողիկոսի հարկադրելը Դատաստանադիրքը գրելու մասին (որայնք եղև պաաճատ գրելոյ զսա ի հարկելոյ զմեզ Տեառն Ստեփաննոսի Աղուանից կաթողիկոսի միանգամ և երկիցս»²², Այնու-

հետև քաջատրում է, թե ի՞նչ է դատաստանը, ո՞ւմ կարելի է վստահել, ո՞վքեր են դատավորները, ինչպիսի՞ն պիտի լինեն դատավորները և դատախազները, ի՞նչ է երգումը, ի՞նչ է վկայությունը։ Գոշը այս բոլոր խնդիրների մեկնարանության մեջ հիմք է ընդունում քրիստոնեական ուսմունքը։ Նախադրության 9-րդ գլխում հրահանգում է քրիստոնյաներին՝ չդիմել մահմեդական դատաստանի, որովհետև հայը հավատացյալ է, մահմեդականը կամ ալլազգին՝ անհավատ, և ոչ մի կապ չկա հավատացյալի ու անհավատի միջև, ինչպես չկա համաձայնություն լուսիի և խավարի միջև («զի՞նչ միարանութիւն է լուսոյ ընդ խաւարի կամ զի՞նչ բաժին կայ հաւատացելոյն ընդ անհաւատին»²³)։ Այս եկզ, ազգաբնական ոգով է շարադրված Դատաստանադիրքը, ինչպես ճիշտ դիտել է Մ. Արեղյանը իր ժամանակին։ Ազգային, կրոնական խտրականությունը դրսևորվել է նաև ճորտերի նկատմամբ սահմանած իր կանոնների մեջ։ Այսպես, Դատաստանադիրքի երկրորդ մասում սահմանում է չեղանկյալ կանոնը. եթե մեկը իր ծառայի կամ աղախնի աչքին խփի և կուրացնի, պետք է նրանց ազատ արձակի նրանց աչքի փոխարեն, կամ եթե իր ծառայի կամ աղախնի ատամը թափի, պետք է նրանց ազատ արձակի նրանց ատամի փոխարեն։ Եվ այս դատաստանը պետք է անփոփոխ մնա հավատացյալների նկատմամբ։ Իսկ եթե նույն ղեկաբը կատարվի այլազորի ծառայի կամ աղախնի հետ, այդ ղեկաբում պետք է ձախել նրանց ըստ իրենց արժեքի, պակաս կամ կես գնով»²⁴։

Այս և համանման խտրականությունը բխում է Մխիթար Գոշի ընդհանուր աշխարհայացքից, այն մտածելակերպից, թե հայեր տարբերվում են մահմեդականներից լեզվով և կրոնով, ուրման պետք է ուսուրբովին նաև դատով ու դատաստանով։

Մխիթար Գոշի աշխարհայացքը և նրա Դատաստանադիրքի ոգին համահնչուն են սուղիալական այն պայմաններին, որոնցում մշակվել ու զարգացել է Մխիթար Գոշի աշխարհամբնությունը։ Նրա օրով Ջաքարե և Իվանե հայ իշխանները՝ Լըաստանի ժողովրդի հետ միասին հայ երկիրն ապատում են սելջուկների տիրապետությունից և ինքնուրույնարար ղեկավարում Ջաքարյանների օրով Հայաստանը վերականգնանում է տնտեսապես և քաղաքականապես։ Հայ ֆեոդալականությունն այս պայմաններում անհրաժեշտություն է զգում իրավաբանորեն ձևափոխելու իր տիրապետությունը և ստրա-

20. «Դատաստանադիրք», էջ 5—6 (վաճառ վրդ. Բուստամյանի հրատարակություն)։

21. Նույնը, էջ 12։

22. Նույնը, էջ 17։

23. Նույնը, էջ 59։

24. Նույնը, մասն երկրորդ, գլ. 1, էջ 343։

պնդելու ալն, Մխիթար Գոշը ունեականորեն հիմնադրում է հայ ֆեոդալականության քաղաքական այդ մտորումները և դրսևորում էր Գառաուտանադրքի մեջ: Դրանով պետք է բացատրել ազգային ներհակությունը, որ տեսնում ենք Գառաուտանադրքի մեջ:

Գառաուտանադիրքն օգտագործվել է ոչ միայն Հայաստանում, այլև Հայաստանից դուրս, որտեղ ապրել է հայությունը սակավաթիվաբար, ինչպես Լեհաստանում, Ղրիմում, Վրաստանում, Վրաստանի թագավոր Վախտանգի գառաուտանադիրքը, որը, ինչպես վերը տեսանք, օգտագործել էր Մխիթար Գոշի Գառաուտանադիրքը, 1835 թվականին մտնում է Ռուսաստանի ընդհանուր օրենքագրքի մեջ: Այս նշանակում է, որ Գոշի Գառաուտանադիրքը մտնում է Ռուսաստանի օրենսդրության մեջ²⁶:

Մխիթար Գոշի Գառաուտանադիրքն սղտագործել է Սմրատու Կիլիկիայի հայ թագավորության օրենսդիրքը կազմելիս:



Մխիթար Գոշի երկրորդ ժողովածուն նրա «Առականք» են: Գոշը, ինչպես ցույց տվինք վերը, թողել է գրական մի շարք ստեղծագործություններ և նշել է հեղինակավոր հասարակական գեմը: Հենց այն հանդամանքը, որ Իվանեն Անիում հրավիրված Լկեղեցականների ժողովին հատուկ հրավերով մասնակից է դարձնում Գոշին, վկայում է նրա հեղինակությունը և բարձր գիրքը իր ժամանակակից առաջավոր մարդկանց շարքում: Գոշի թողած գրական ժառանգության մեջ «Առականքը» հանդիսանում են նրա լավագույն գրական ստեղծագործությունը: «Առականքը» արժեքավոր ներդրում են հայ գրականության մեջ և արտացոլում են Մխիթար Գոշի ժամանակի հայ հասարակական հարաբերությունները, պայքարը, հայ ժողովրդի կենցաղը, իրավունքը, քննադատվում են ընկած բարքերը, տիրույթների ճնշումը և շահագործումը: «Նազանդյալ» ենքին, Մխիթար Գոշը յինելով իր ժամանակի հասարակության ծնունդը և այդ հասարակության դերիշխող դասի՝ հայ ավառականության և հողերականության զաղափարախուսը, յի բողոքում ժամանակի սոցիալական անհավասարության և դասակարգային ներհակության դեմ: Հասարակության շերտավորումը տիրողների և «նազանդյալների» նրա համար բնական երևույթ է, իսկ պայքարը հողերների դեմ ավելորդ, որովհետև հողերներին հաղթելն անկարելի է, Այս միտքն արտահայտել է հետևյալ առակի մեջ.

²⁵ Վահան վրդ Թառամյան—Կույնք, էջ 105.

«Մի անգամ առողները հավաքվեցին և նրանցից ամենածերերն ուսացին».

— Մենք շատ ենք, ուրեմն ինչու՞ չենք յուսավորում ցեղերին ու գիշերը արեգակի նման:

— Որովհետև միարանությունը չենք վարվում—պատասխանեց մեկը:

Նվ որոշեցին նախ հայածել ու փախցնել, արեգակին, բայց նրր յուսինը ծագեց, հազվելով նրանից՝ տառերն ասացին:

— Ի՞նչ մենք յուսին յուսից այսպես ազոտացանք, ապա ի՞նչ կլինի, նրր արեք ծագի:

Առողները զգացին և խոստովանեցին իրենց պարտությունը²⁶,

Այս առակն ասում է՝ թեկուր շատ յինեն և տկար, բայց ուժեղին հաղթել չեն կարող²⁷:

Գոշը քարոզում է հնազանդություն իշխաններին և թագավորներին, անհնազանդությունը չարիք է առաջացնում և խախտում է իշխանության անսահման կարգն ու կանոնը. «այնոքիս յուժանին կարգք իշխանությունան»²⁸:

Իժդոհներին և անհնազանդներին համոզում է, որ վերնախավերը նրանց խնամում է, պաշտպանում են և տալիս են ժողովրդիկն ավելի շատ, քան ստանում են նրանից: Իր այս հայացքն արաահայտված է հետևյալ առակների մեջ.

«Սեղև երբեմն տրտունջ անդուռ, թէ վառ ծնեցող մեր աշխատիմք, և ստեամբք ժողովեմք կա՞նք. և մարդիկ ճմլնալ զպատկունս մեր առնուն ի մէնջ զվաստակս մեր ելցուք և այլ մի՞ դարձուք առ նոսա՞ն: Ի՞նչ ո՞ւմն ի նոցանէ իմաստուն ուսէ. Ոչ է այդպէս, զի զաւելորդան քան զպէտս ծնեցող մերոց առնուն մարդիկ, և խնամեն զմեզ և զծնունդս մեր, զի առնումք շատ, քան թէ տամք»²⁹:

Գոշը առականքի մեջ հնազանդությունը բարոյակով ժողովրդին միաժամանակ զգուշացնում է իշխողներին զոչաշանալ ժողովրդից, որը կարող է իմաստությունը դորանալ և հաղթել տերերին, հզորներին, Այս միտքը զարգացնում է հետևյալ գեղեցիկ առակի մեջ.

«Ջրոյն մրջնան արց փորէր և լեզուաւ ժողովէր և ուտէր, և նեարի մրջին սատակել զնա. Երթնալ առ պիծակ և դոռնիս, և մծեիս և շանահանճ և բրէտ և առ նման

²⁶ Մխիթար Գոշ, Վարդան—Առականք, Երևան, 1951 թ., էջ 7:

²⁷ Մխիթար Գոշ—Առականք, Երևան, 1951 թ., էջ 46:

²⁸ Նույնը, էջ 74:

²⁹ Նույնը, էջ 86, 3:

ուղիքն և աղաչել ոգնել իրր ազգային: մասակցեն, հարկանեն զաշս և զլսելիս ար- չուն, և հարկանել գլուխի զթարի, և նեխի և որդուց ևս ծնանին. և ի սաստկութենե ցաւոց զընթան րացեալ գոչէր և նոցա մտեալ յորովայն խոցոտէին զաղիսն, և նեղեալ դիմէ ի հոսանս ջրոյ, և անշափ ի ներքս մտեալ հեղձանի:

Զորութիւն առակիս այսպիսի է. զի հզօրք արհամարհեն, և ոչ երկնչին, սակայն իմաստութեամբ զօրանան փոքունք, և յաղթեն հզօրաց: Բայց այս իմաստութիւն է՝ ի փոքունց իրրն ի մեծաց երկնչելս³⁰:

Պոչը որպէս և կենդեցական շի խարազանում: Դոգնորականութեան թերութիւնները, ի խանդարում նրանց, ինչպէս Վարդան Այգեկ- ցին: Եվ եթէ մի քանի սակավաթիվ առականների մեջ (ԺԺԿ, ԻԲ, ԶԷ, ԺԻԱ) շեշտում է նրանց թերութիւնները, ապա դա բխում է նրա՝ Դոգնորականութեանը ժողովրդի աշխուժ- րարձրացնելու, նրան զաստիարակելու նպատակադրումից: Նա անթույլատրելի է համարում և կենդեցականներին արհամարհելը և նրանց իրավունքի տանահարումը աշխար- հականների կողմից և բարձրացնում է հոգե- վորականութեան զերը: Այդ տրամադրու- թիւնն է արտահայտում հետևյալ առակը.

Ոճրկիր հայեցեալ ի բարձրութիւն լերանց համարձակեցաւ լինել երկին և ոչ կարաց զլուսաւորս ընդ ինքեամբ առնել նման երկնի՝ և լուսաւորել:

Ցանդիման է նշանակաւ զաշխարհականս ոմանս, որ փքուցեալ ի ճոխութիւն իւ- րեանց, զքահանայից կամին յափշտակել զպատիւ, սակայն լուսաւորին՝ քան լու- սաւորեն, նման երկրի, զի լուսաւորի, քան լուսաւորէս³¹:

30. Մխիթար Պոչ, Եռւյն, էջ 116, ԺԺԴ:

31. Նույնը, էջ 46:

Պոչի առակների մեջ, ամկախ իրենից, օրյեկտիվորեն դրսևորվել է իր ժամանակի րազաթի և դշուդի հակադրութիւնը, զասա- կարդային հակամարտութեանը՝ և այլն. նրա առակներին մեջ, ինչպէս Ոգոպոսի առակնե- րի մեջ, գործում են մարդիկ, հասարակա- կան տարրեր խափնրի ու պրոֆեսիայի ներ- կայացուցիչներ, այլև կենդանիներ, թռչուն- ներ, զեռուններ, ճիւղուններ, բույսեր, հա- տիկներ, զեռեր, ծառեր, հացարույսեր, արև, լուսին, աստղեր և այլն, բայց դրանց մե- ղնականարար մեծ տեղ են բռնում կենդա- նիները, որովհետև առակները կենդանական վեպի մնացորդներ են, որոնք երկար դարեր պահպանվել են ժողովրդի մեջ: Այս առակ- ների մեջ Պոչը պատմելուց հետո վերջում գնում է առակի բարոյական իմաստը և ըն- թերցողին հասկանալի դարձնում նրա միտքը:

Պոչի առակների թիվը 190 է: Նա առակ- ները բաժանել է երկու խմբի: Առաջին խում- րը անվանում է առասպելական և բարոյա- կան առակներ (սկոպիս առասպելական և բարոյականներ), իսկ երկրորդը՝ հորինված, ստեղծագործական (սկոպիս ստեղծականներ):

Պոչի առակները, բացի այն, որ դրսևո- րում են իրենց ժամանակի հասարակական հարաբերութիւնները, պարունակում են բա- րոյախոսական հրահանգներ, հասարակա- կան արատները վերացնելու նպատակով տրված խրատներ: Այս իմաստով նա հունա- կան առակադրից հետո հանդիսանում է երկրորդը համաշխարհային գրականութեան մեջ թե՛ որպէս առակադրի և թե՛ որպէս զիջակտիկ պոեզիայի ներկայացուցիչ:

32. Պրոֆ. Մ. Արեղյան. «Հայոց միջնադարյան առակներն և սոցիալական հարաբերութիւնները նրանց մեջ», Երևան, 1955 թ.



ՏԱՐԵԹՎԵՐԻ ԵՎ ԱՄՍԱԹՎԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ*

Յ. ՀԱՅԿԱԿԱՆ ՓՈԹՐ ԿԱՄ ՄՏՐՈՒՆԻ ԽՂԱԿԱՆ

Ե՛ւ թ աղյուսակը վերջացավ 1084 թվականին, նոր աղյուսակը կազմեց Հովհաննես Սարկավազ Իմաստասերը Անիում: Հովհաննեսը հայտնի էր Սարկավազ մականունով. ուստի և այդ թվականը կոչվեց նաև Սարկավազադիր: Նա հայկական տոմարի մեջ կատարեց հետևյալ փոփոխությունները. ա) Հայկական տոմարը շարժականից անշարժ դարձնելու համար ավելյաց ամսի վրա ավելացրեց չորս տարվա ընթացքում զոյացած նահանջ որը՝ ավելյաց 5-ր դարձնելով 6. բ) հայկական տարեգրությունը՝ նախասարդի 1-ը ամրացրեց օգոստոսի 11-ին և այդ հետևողականությամբ կազմեց համապատասխան տախտակ և գ) անցյալում կուտակված նահանջների սխալը հայկական թվականությունից վերացնելու համար հայկական ՇԼԹ թվականը (որը համապատասխանում էր 1084 թվականին) կրկնեց, և տարեգրությունը փետրվարի 29-ից տեղափոխեց օգոստոսի 11-ը, այլ խոսքով ասած, հայկական թվականությունից ղեն նետեց հավելյալ մեկ և կես տարի:

Հայկական տոմարն անշարժ դարձնելուց հետո զժվար չէր կազմել հայ-հռոմեական ամսաթվերի դուգահեռ աղյուսակ, որը նույնպես կատարեց Հովհաննես Սարկավազը:

Սարկավազիր թվականը ներկա թվականին վերածելու համար անհրաժեշտ է տրված թվականին գումարել 1084, իսկ 1317 թվականից հետո՝ 1085:

Հայկական ՍՍԹ Պետական մատենադարանի № 7650 ձեռագիր Ավետարանը դրված է թի մարդկեղութեան հետոն Աստուծոյ մերոյ և յիննարար Փրկչին Յիսուսի Քրիստոսի ի ՌԳՃԼԹ (1332) ամն, լուսաւոր վարդապետութենէ սուրբ ծնողիս մերոյ և երջանկին Գրիգորի ՌՃԼ (1130) ամն, և ի թուականութեանս Հայոց տոմարի, որ Արեւիական կոչի՝ 22Թ (778) և ի փոքր թվի՝ ՄԽԶ (246)...

Մարդեղության թվականը սխալ է, ՌԳՃԼԹ լինելու փոխարեն սխալ լինի ՌԳՃԼ (1330): Հայկական մեծ թվականն է՝ $778 + 552 = 1330$: Փոքր թվականի ՄԽԶ-ին գումարենք 1084 , հավասար է 1330 -ի $(246 + 1084 = 1330)$: Ուրեմն ձեռագիրը դրված է 1330 թվին:

Հովասափ Սերաստացին իր ընդգրկնական մի ձեռագրի գրությունն ավարտելու թվականի մասին հետևյալն է հաղորդում.

...Որ տարիանոք սիրոյ կրկին, նտու գրել ինձ ըզսորին, ի ծննդենէ մարմնով քոյին, ի թիւ յատուկ մի հազարին, նրեք հարիւր և ի յիսնին, նւ ի մի ամ սկսեալ ամին. Սակայն ի թիւ Ասքանազեան, Յեւթն հարիւր տօմարական, նւ ի յիննրսուն աւարտական, նւ ի յութեակ թիւն յանգական, իսկ ի փոքրիկըն մեր շրջան.

* Սկզբը տե՛ս «Էջմիածին» ամսագրի 1956 թվականի 21-ում:

27. Հայկական ՍՍԹ Պետական մատենադարանի ձեռագիր № 7650, ք. 155ա:

երկու հարիւրն թուական,

նւ վաթսուն և հինգ ասարտական...²⁸

Ձեռագիրը գրված է սերկա թվականի 1351-ին, հայկական թվականի 793-ին (798 + 553 = 1351), փոքր թվականով՝ 265 (265 + 1085 = 1350), եթե հաշվենք նաև, որ ոգոստոսի 11-ից հետո է եղել, ապա փոքր թվականով ես կրիի 1351-ին:

Բնութիւնի կայսերական գրադարանի սեփականությունը կազմող հայկական մի ձեռագրի հիշատակարանում կարգում ենք. «Գրեցաւ և յանգ ելեալ ասարտեցաւ տետրակս լետ ևրգարանիս 922 Հայկազեան» թուոյ և ի փոքր թուին ՄՄԴ, իսկ յաշխարհակալ զանութեան սուլթան Մահմուտին...»²⁹, Այստեղ երկու թվականների տարբերությունը 552 է (786 + 553 = 1339, 254 + 1085 = 1339),

Հայկական ՍՍԹ Պետական մատենադարանի Մ 2680 ձեռագրի Հարանց վարքում Ս. Պարսամի վարքի թարգմանությունը կատարված է «ի թվականիս Հայոց ի նորում չրջանի յամի քառասներորդի առաջներորդի...»³⁰, Թարգմանությունը կատարված է 1125 թվին (41 + 1084 = 1125),

Հայկական ՍՍԹ Պետական մատենադարանի սեփականությունը կազմող Եղիշեի պատմության հնագույն ընդօրինակությունը ավարտված է «ի Հայկազեան թուականիս վեց հարիւրերորդի և երկուց տասանց՝ Լգական միով առաւելալ և ըստ նորում չրջանիս միոյ յորելիքի և երից տասանց և քառից Լրկուց և ըստ ծննդեան Կենարարին և մերոյ աղատութեան ի մահուանէ յանմահութիւն են ամբ ՌՃԶԴ»³¹ (Գարեգին կաթողիկոս Հովսեփյանի մոտ սխալմամբ ՌՃԶԴ), Ձեռագիրը գրված է 1173-ին (88 + 1084 = 1172) (օգոստոսի 11-ից հետո է, ուրեմն պիտի ավելացնել մի տարի ևս), որը համապատասխանում է հիշված քրիստոնեական ՌՃԶԴ-ին և հայկական 821-ին (621 + 552 = 1173),

Հովհաննես Սարկավազը իր օրոք տեղի ունեցած խավարման ժամանակի մասին հետևյալ տեղեկությունն է հաղորդում. «Յայսմ խաւարման արեգականն էր թուականն Հոռմայեցոյց փոքր ՅԼԳ, և Հայոցն

նոյնպէս փոյրն իմ... և էր շինութիւն քաղաքին Հոռոմոց ՊԿԷ, իսկ Դիոկղեսիանոսի՝ ՊԼ ամ, և Անտիոքի քաղաքի շինութեան ՌԿԳ, և Կիւրոս (երեք Տիրոս)՝ քաղաքի ՌՆԻ է, իսկ ի դալատենէ Տեառն մերոյ Յիսուսի Զրիստոսի ՌՃԺն ամ ըստ հաստատուն և ճշմարիտ ամարոյ, և յԱղամայ՝ ԶԾԳ ամ ըստ նւթանանից թարգմանության...»³², Սարկավազի ներկա տեքստը հետաքրքիր է իր թվականների տեսակետով, որոնք փոքր ինչ տարբերությամբ տալիս են մեզ 1113—1115 թվականները, անշուշտ դրական սխալների նշանակելով, Հոռմական 333-ը հավասար է 1113-ի (333 + 244 + 532), Հայոց փոքրը 1113-ի (29 + 1084), Հոռմի շինության՝ 1115-ի (867 + 248), Դիոկղեսիանոսի՝ 1115-ի (831 + 284), Անտիոքի շինության՝ 1115-ի (1063 + 52), Տյուրոսի շինության՝ 1115-ի (1420—305), քրիստոնեական թվականով նշանակված է արդեն 1115, և, վերջապես, Արարչության թվականով հավասար է 1115-ի (6315—5198),

Ուշադրության արժանի է այն, որ Հովհաննես Սարկավազի տոմարական վերև հիշված քարեփոխությունից հետո, երբ նա նահանջ տարին դուրս էր արել հայկական թվականից և տարահաշվումները հայկական թվականով 552-ից իջեցրել 551-ի, հայկական թվականի մեջ շարունակում են նահանջ տարվա հաշվումները՝ տարբերությունները հասցնելով 553-ի, Այդ ավելի հաստատուն և օրինական ձև է ստեղծում առանձնապես 1315—1318 թվականներից հետո, երբ հայկական նահանջ տարիների կոտակումով աստղաբաշխական մի տարվա մեջ Լրկու անդամ նախասարդ տեղի ունեցավ, Ըստ Էրեւոյթին Հովհաննես Սարկավազի տոմարական քարեփոխումները տարահաշվի խնդրում տեսական ընտելի ունեցան և գործադրության մեջ չդրվեցին:

Ռոյոր զեպքերում, 1315—1318 թվականներից հետո հայկական թվականները պիտի հաշվել 553-ով, Թավական է ասել, որ պատմական գիտությունների թեկնածու է. հաշիվյանի հրատարակած 18-րդ դարի հիշատակարանների մեջ տոմարական համեմատական թվականներ են պարունակում այդ տարվան պատկանող մոտ 32 ձեռագրեր, որոնցից 22-ը, անփիճելի, գումարվում է 553, 3-ը՝ 550, իսկ 5-ի թվականները գրական սխալներով են: Տեքստը չժանրարեւելյու համար չենք ուզում այլ օրինակներ բերել: Այս հարցի մասին մենք պատրաստվենք ընդարձակ մի ուսումնասիրություն, որը մտադիր ենք հրատարակել առաջիկայում:

32. Տե՛ս Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, որը ներկայումս գտնվում է տպագրության մեջ:

28. Հ. Տաշյան, Յուդակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Միսթարեանց ի Վիեննա, Վիեննա, 1885 թ., էջ 1020:

29. N. Karamianz, Handschriften Verzeichniss der Königlichen Bibliothek zu Berlin, 1888, p. 26.

30. Հայկական ՍՍԹ Պետական մատենադարանի ձեռագիր Մ 2680, թ. 119բ:

31. Գարեգին կաթողիկոս Հովսեփյան, Հիշատակարանք ձեռագրաց, էջ 410:

Մեկ կարծիքով, տոմարական այս նոր հանգիստը լույսի տակ հիմնովին պիտի վերանայն: Հայ ժողովրդի պատմության 8—15-րդ

դարերի ժամանակագրությունը և շտկել 551-ի սխալ հաջորդ կատարված լուրջ հաշվումները:

1. ԱՂԱՐԻԱ ԶՈՒՂԱՅԵՑՈՒ ՔՎԱԿԱՆԸ

1616 թվականին վերջացավ «Աղարիա-պարիս» կամ «փոքր» կոչվող ՇԼԲ աղյուսակը: Նոր-Ջուղայում Աղարիա անունով մեկը կադմեյ նոր ՇԼԲ աղյուսակ: Հայկական տոմարի այս երրորդ ՇԼԲ աղյուսակը սկիզբը հանդիսացավ նոր թվականի, որը մեր մատենագրության մեջ կոչվում է «Աղարիայի թվական»:

Աղարիա Ջուղայեցու այս թվականը լույս հործածության մեջ յղովնեց, նրա թվականը հործածվեց միայն Պարսկաստանի և Հրեական տարեկան շրջաններում:

Աղարիայի թվականը մեր ներկա թվականին վեր ածելու համար անհրաժեշտ է նրա վրա ավելացնել 1616:

Բերենք Աղարիայի թվականի հործածության մի քանի օրինակ:

Նոր-Ջուղայի Ա. Հուսամիրիչ եկեղեցու դավթի մի տապանաքարի վրա կարգում ենք

Այս է տապան Փանոսի,
Անմեղ մանկան նահատակի,
Կրտսեր որդի Խոջամայի,
Խելոք սողայ քաղցր և բարի,
Կակիժ էմուց եղբարք սրտի,
Փոքր թիվն ճէ-ի
Նախայ ամսի մինս³³,

Փոքր, այսինքն Աղարիայի թվականով ճէ-ն հավասար է ներկա թվականի 1723-ին (107 + 1616 = 1723), իսկ նախա ամսի 1-ը հավասար է հունիսի 19-ին:

Բաղիր օղլու շափածո մի տալում ասված է.

Թիւն ճէն նաղիր սարգանն վեր առնց
կրակն³⁴

Ոչ միայն երկրումս մարդ չեթող.

Այլ թամամ աշխարս երևտ մին միս մահակն...³⁵,

Աղարիայի ճէն թվականը ներկա թվականի 1747-ն է (131 + 1616 = 1747):

Բանդված Նոր-Ջուղան վերականգնելու համար քաղաքի այժի ընկնող 26 հայ զեկավարներ կնքել են մի պայմանագիր Աղարիայի 154 թվականին. «Գրվեցավ թիվն 154 նախայ 15», — կարգում ենք այդ պայմանագրի վերջում³⁶, Աղարիա Ջուղայեցու 154 թվականը հավասար է մեր ներկա թվականի

1770-ին (1616 + 154 = 1770), իսկ նախա 15-ը՝ հուլիսի 3-ին:

1798 թվականին Կալկաթայում տպված էֆիմերտեի մեջ մեր ներկա թվականության 1752-ը համաձայնեցված է Աղարիայի թվականի 136-ին, Հայոց թվականի 1201-ին, հրեյց 5512-ին և հիյրայի 1165-ին (էջ 91), ներկա թվականի և Աղարիայի թվականի տարբերությունը, ինչպես տեսնում ենք, պարզապես 1616 է (1752 — 136 = 1616)³⁷,

Աղարիան, ի զեպ, փորձել է որոշ փոփոխություններ մտցնել Հայկական տոմարի մեջ. նա փոխել է հայկական նախկին ամիսների անունները և տարեկալույս օրոստոսի 11-ից տեղափոխել մարտի 22-ին:

Աղարիա Ջուղայեցին փորձել է նաև ամիսների պարսկական անունները հայացնել տալով նրանց նոր անուններ, Բերում ենք Աղարիայի և ներկա մեր ամսաթվերը դուրս հանում.

Տողարև — մարտի 21-ից ապրիլի 19-ը,
Մաղկալետ — ապրիլի 20-ից մայիսի 19-ը,
Դետաճոս — մայիսի 20-ից հունիսի 18-ը,
Պողարև — հունիսի 19-ից հուլիսի 18-ը,
Առատաճոս — հուլիսի 19-ից օգոստոսի 17-ը,

Դոնուրիւն — օգոստոսի 18-ից սեպտեմբերի 16-ը,

Պողակիր — սեպտեմբերի 17-ից հոկտեմբերի 16-ը,

Տերևարափ — հոկտեմբերի 17-ից նոյեմբերի 15-ը,

Ձիւնարև — նոյեմբերի 16-ից դեկտեմբերի 15-ը,

Սառուցեալ — դեկտեմբերի 16-ից հունվարի 14-ը,

Հողմաշունչ — հունվարի 15-ից փետրվարի 13-ը,

Ձիւնաճալ — փետրվարի 14-ից մարտի 15-ը,

Մաղկալ — մարտի 16-ից մարտի 20-ը³⁸.

Տոմարական հաշվումների գործը նշատեցնելու համար անհրաժեշտ ենք համարում բերել հոռմեական, հին հայկական և Աղարիա Ջուղայեցու ամսաթվերի համեմատական աղյուսակները.

33. Տեր-Հովհաննիսյանց, Պատմութիւն Նոր-Ջուղայի, Կաթն, էջ 231.

34. Նույն տեղում, էջ 203.

35. Նույն տեղում, էջ 214.

36. Գրգուկ, որ կայի էֆիմիլաով, Կաթն, 1798 թ., էջ 91—105.

37. Ա. Արքահայտն, Հայկական պալեոգրաֆիա, Երևան, 1955 թ., էջ 128.

Ա Ե Ն Ե Կ Ի			Ք Ե Խ Բ Կ Ե Բ			Օ Գ Գ Ե Ե		
1	2	3	4	5	6	7	8	9
7	8	9	10	11	12	13	14	15
16	17	18	19	20	21	22	23	24
25	26	27	28	29	30			
31	32	33	34	35	36			
37	38	39	40	41	42			
43	44	45	46	47	48			
49	50	51	52	53	54			
55	56	57	58	59	60			
61	62	63	64	65	66			
67	68	69	70	71	72			
73	74	75	76	77	78			
79	80	81	82	83	84			
85	86	87	88	89	90			
91	92	93	94	95	96			
97	98	99	100	101	102			
103	104	105	106	107	108			
109	110	111	112	113	114			
115	116	117	118	119	120			
121	122	123	124	125	126			
127	128	129	130	131	132			
133	134	135	136	137	138			
139	140	141	142	143	144			
145	146	147	148	149	150			
151	152	153	154	155	156			
157	158	159	160	161	162			
163	164	165	166	167	168			
169	170	171	172	173	174			
175	176	177	178	179	180			
181	182	183	184	185	186			
187	188	189	190	191	192			
193	194	195	196	197	198			
199	200	201	202	203	204			
205	206	207	208	209	210			
211	212	213	214	215	216			
217	218	219	220	221	222			
223	224	225	226	227	228			
229	230	231	232	233	234			
235	236	237	238	239	240			
241	242	243	244	245	246			
247	248	249	250	251	252			
253	254	255	256	257	258			
259	260	261	262	263	264			
265	266	267	268	269	270			
271	272	273	274	275	276			
277	278	279	280	281	282			
283	284	285	286	287	288			
289	290	291	292	293	294			
295	296	297	298	299	300			
301	302	303	304	305	306			
307	308	309	310	311	312			
313	314	315	316	317	318			
319	320	321	322	323	324			
325	326	327	328	329	330			
331	332	333	334	335	336			
337	338	339	340	341	342			
343	344	345	346	347	348			
349	350	351	352	353	354			
355	356	357	358	359	360			
361	362	363	364	365	366			
367	368	369	370	371	372			
373	374	375	376	377	378			
379	380	381	382	383	384			
385	386	387	388	389	390			
391	392	393	394	395	396			
397	398	399	400	401	402			
403	404	405	406	407	408			
409	410	411	412	413	414			
415	416	417	418	419	420			
421	422	423	424	425	426			
427	428	429	430	431	432			
433	434	435	436	437	438			
439	440	441	442	443	444			
445	446	447	448	449	450			
451	452	453	454	455	456			
457	458	459	460	461	462			
463	464	465	466	467	468			
469	470	471	472	473	474			
475	476	477	478	479	480			
481	482	483	484	485	486			
487	488	489	490	491	492			
493	494	495	496	497	498			
499	500	501	502	503	504			
505	506	507	508	509	510			
511	512	513	514	515	516			
517	518	519	520	521	522			
523	524	525	526	527	528			
529	530	531	532	533	534			
535	536	537	538	539	540			
541	542	543	544	545	546			
547	548	549	550	551	552			
553	554	555	556	557	558			
559	560	561	562	563	564			
565	566	567	568	569	570			
571	572	573	574	575	576			
577	578	579	580	581	582			
583	584	585	586	587	588			
589	590	591	592	593	594			
595	596	597	598	599	600			
601	602	603	604	605	606			
607	608	609	610	611	612			
613	614	615	616	617	618			
619	620	621	622	623	624			
625	626	627	628	629	630			
631	632	633	634	635	636			
637	638	639	640	641	642			
643	644	645	646	647	648			
649	650	651	652	653	654			
655	656	657	658	659	660			
661	662	663	664	665	666			
667	668	669	670	671	672			
673	674	675	676	677	678			
679	680	681	682	683	684			
685	686	687	688	689	690			
691	692	693	694	695	696			
697	698	699	700	701	702			
703	704	705	706	707	708			
709	710	711	712	713	714			
715	716	717	718	719	720			
721	722	723	724	725	726			
727	728	729	730	731	732			
733	734	735	736	737	738			
739	740	741	742	743	744			
745	746	747	748	749	750			
751	752	753	754	755	756			
757	758	759	760	761	762			
763	764	765	766	767	768			
769	770	771	772	773	774			
775	776	777	778	779	780			
781	782	783	784	785	786			
787	788	789	790	791	792			
793	794	795	796	797	798			
799	800	801	802	803	804			
805	806	807	808	809	810			
811	812	813	814	815	816			
817	818	819	820	821	822			
823	824	825	826	827	828			
829	830	831	832	833	834			
835	836	837	838	839	840			
841	842	843	844	845	846			
847	848	849	850	851	852			
853	854	855	856	857	858			
859	860	861	862	863	864			
865	866	867	868	869	870			
871	872	873	874	875	876			
877	878	879	880	881	882			
883	884	885	886	887	888			
889	890	891	892	893	894			
895	896	897	898	899	900			
901	902	903	904	905	906			
907	908	909	910	911	912			
913	914	915	916	917	918			
919	920	921	922	923	924			
925	926	927	928	929	930			
931	932	933	934	935	936			
937	938	939	940	941	942			
943	944	945	946	947	948			
949	950	951	952	953	954			
955	956	957	958	959	960			
961	962	963	964	965	966			
967	968	969	970	971	972			
973	974	975	976	977	978			
979	980	981	982	983	984			
985	986	987	988	989	990			
991	992	993	994	995	996			
997	998	999	1000	1001	1002			
1003	1004	1005	1006	1007	1008			
1009	1010	1011	1012	1013	1014			
1015	1016	1017	1018	1019	1020			
1021	1022	1023	1024	1025	1026			
1027	1028	1029	1030	1031	1032			
1033	1034	1035	1036	1037	1038			
1039	1040	1041	1042	1043	1044			
1045	1046	1047	1048	1049	1050			
1051	1052	1053	1054	1055	1056			
1057	1058	1059	1060	1061	1062			
1063	1064	1065	1066	1067	1068			
1069	1070	1071	1072	1073	1074			
1075	1076	1077	1078	1079	1080			
1081	1082	1083	1084	1085	1086			
1087	1088	1089	1090	1091	1092			
1093	1094	1095	1096	1097	1098			
1099	1100	1101	110					

5. ԱՐԱՐՁՈՒԹՅԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԸ

Հայկական մատենագրության մեջ մի շարք թվականներից հին գործածություն ունի արարչության կոչվող թվականը: Ավանդական այս թվականը հայ մատենագրության մեջ հիշվում է տարբեր անուններով՝ «Թուալանուրին Աղամայ», «Թուալանուրին Ելանել-լայն Աղամայ» ի դրախտենա, «Ժամանակ սկզբանց արարչուրենա» և այլն:

Արարչության այս թվականը մի քանի տասնյակ տարբեր հաշվումներ ունի: Հովանեն Իմաստասերը, իր «Մեկնություն տոմարիս Հայկազենայ» աշխատության մեջ, խոսելով արարչության թվականների տարբերությունների մասին, տալիս է մատենագրության մեջ օգտագործվող հետևյալ թվականների ցանկը՝ հաշվելով ստեղծագործություններից մինչև հարց թվականի սկիզբը:

1. Անդրեասի ժամանակագրությունը՝

6155.

2. Կայսերական ժամանակագրությունը՝

5716.

3. Անանիա Շիրակունու ժամանակագրությունը՝

5198.

4. Եպիփանի ժամանակագրությունը՝

6053.

5. Նորայեցվոց ժամանակագրությունը՝

6289.

6. Հրեից ժամանակագրությունը՝

5824.

7. Շարմատացվոց ժամանակագրությունը՝

5832.

8. Հինգհարյուրյակի ժամանակագրությունը՝

5876.

Նույն հեղինակն անգրադատնալով թվականների այս տարբերությունը, նշում է. «Են, բանդի րագումը յառաջնոց վարդապետացն անտի դրեցին ըստ իւրաքանչիւր գիպման թնութեան» ի կիր առնալ վասն ստուգելոյ ամացն անցելոց, սակայն անմիարան հանդիպին միմեանց»³⁸, Մի այլ կապակցությամբ նա նշում է. «Ի յարարչութենէն զժամանակն ոչ որ կարասցէ դիտել ի մարդկանէ»³⁹:

Հին գրականության մեջ արարչության թվականներից կիրառության մեջ են մտել հետևյալները.

1. Նորայեկան 4000.

2. Ուսմարական (որով հրեաներն առաջնորդվում են այժմ) 4700.

3. Յոթնասնից և Եփեսիոսի 5108/99.

4. Կոստանդնուպոլսի կամ

Բյուզանդական 5508/09.

5. Ափրիկանոսի 5500/01.

³⁸ Հայկական ՍՍՌ Պետական մատենագրարի Լեռնադիր X 1973, ք. 161ա:

³⁹ Նույն ձեռագիրը, ք. 198բ:

6. Մովսես Այոնեցու և Ասու-

դիկի 5276/77.

7. Անանիա Շիրակացու 5279/80.

8. Էսաս Աղեքսանդրացու 5423/24.

9. Անտիոքյան 5493/94.

10. Անդրեաս Տոմարագետի 5420/21. և այլն⁴⁰:

Արարչության այս թվականներից հայ մատենագրության մեջ օգտագործվել են հիմնականում չորսը՝ բյուզանդական, յոթնասնից, Աղեքսանդրյան և հրեական: Անհրաժեշտ ենք համարում նրանց վրա կանգ առնել առանձին-առանձին և մեր մատենագրությունից բերել տոշ օրինակներ:

ա) Արարչության բյուզանդական թվականը: Այս թվականը կոչվում է նաև կայսերական կամ Կոստանդնուպոլսի Գործ է ածվել զյիսավորապես բյուզանդական կայսրության սահմաններում: Այս թվականի սկզբից մինչև մեր Ներկա թվականությունը հաշվվում է 5508 կամ 5509: Տարևուտն սկսում է սեպտեմբեր ամսի 1-ից (և՛ թե դեպքը տեղի է ունեղի սեպտեմբերի 1-ից առաջ՝ հաշվվում է 5508, իսկ եթե հետո՝ 5509): Մինչև 1700 թվականը Ռուսաստանում գործածվող պաշտոնական թվարկությունն այս է հանդիսացել և գործածությունից դուրս է լանվել Պետրոս I-ի ղեկավարների 13-ի հրովարտակով և նրա տեղ մուծվել է ներկա թվականի գործածությունը⁴¹:

Սոկրատի Եկեղեցական պատմությունը և Սեդրեսուրոսի վարքը Փիլոն Թրակացին թարգմանել է «Ցամի վեցհազարերորդի երկերերորդի չորրորդի կենցաղում անցատրի, որպէս ունի ժամանակագրութիւն Սուրբ Սոփի աւագ եկեղեցի տիեզերական մայրաքաղաքին Կոստանդնուպոլսի...»⁴², Այսպիսով թարգմանությունը կատարվել է մեր Ներկա 696 թվականին (6204—5508 = 696):

Դիոնիսիոս Արիստարքացու «Ցաղաղս Եկեղեցական և Նրկնային քահանայութեան» ուղեաւուրությունը Ստեփանոս Սյունեցին թարգմանել և մեկնել է «Ի վեցհազարերորդի երկերիւրերորդի քսաներորդի ամի արարածոց, ըստ յովնարէն թուոյ ի չորեքտասաներորդի ընդիրտիոնին, յերկրորդ ամի թաղաւորու-

⁴⁰ Հ. Մ. Չամչյան, Պատմութիւն Հայոց, հատոր 7, Վենետիկ, 1786 թ., (տե՛ս հատորի վերջում կցված ժամանակագրությունը):

⁴¹ Л. В. Черепнин, Русская хронология, Москва, 1894 г., стр. 24—33.

⁴² Մ. վրդ. Տեր-Մովսէսյան, Սոկրատայ Արքայապետի Եկեղեցական պատմութիւն, Վաղարշապատ, 1892 թ., էջ ԺԷ:

Քնանն Փիլիպպոսի...⁴³ Քարգմանութունը կատարվել է 712 թվականին (6220—5508 = 712)։ Փիլիպպոս կայսերը երկրորդ տարին, իրոք, 712 է. նա զոհակալել է 711 թվականին։ Գրիգոր Նյուսացու տշխատությունները Միմեոն կրտսերին բնագրից անկել է «նամի 824-կրորդ յախտենից... յիշխանութիան Խանել Աթապակին...»⁴⁴ Ընդգրկնակված է 1227 թվին (6735—5508 = 1227)։

Անրատիայի Ս. Նշան վանքի Մ 2 ձեռագիրն ընդգրկնակված է «ի թուխ յախտենից, որ է Աղամալ»⁴⁵ 841 (6821), և ըստ Հայկական թուղթի 248, յամսեանն յուլիսի տԸ (18)... ի թաղատությունն Հայոց պարոն Աշխի...»⁴⁶ Չնուդիրն ընդգրկնակվել է 1313 թվականին (6821—5508 = 1313), որը համապատասխանում է Հայկական 248-ին (762 + 551 = 1313)։

բ) Առաջուրյան յորանանից լվալանը։ Ըստ Յոթնասնից թարգմանության թվահաշվի, ստեղծագործությունից մինչև մեր թվականը պիտի հաշվել 5198 կամ 5199՝ նա. յած սեպտեմբերից առաջ է, ինչ հետո՝ տա. թեմուտը հաշվելով սեպտեմբերի 1-ից։

Վենետիկի Մխիթարյանների մատենադարանի Մ 128 ձեռագիրը Ավետարանն ընդգրկնակվել է Թեոդոսիոսում «յելիցն Աղամայ ի գրտխտն առ մեզ» հազարաց վեցից և յորից հարիւրից, Կրեստն յաւելեալ ամառի Իսկ ի ծագմանն րանին Աստուծոյ՝ հաղարի միոյ և երկուց հարիւրից, Երեսուն և երկուս յաւելեալ ամառի, և հայկազնսն տումարիս՝ վեցից հարիւրից և յնասուն և ինն ամառ...»⁴⁶ Արարչության 6430-ից էթն հանելու յիննթ յոթնասնից թվահաշվով 5198, կմնա 1232, որը և ձեռագրի գրության թվականն է, նա համապատասխանում է ընագրում հիշված հայկական 679 թվականին, եթե նրան գումարելու յիններ ոչ թե 551, այլ 553 (679 + 553 = 1232)։ (Այս մասին խոսել ենք առջևում)։

Վենետիկի Մխիթարյանների մատենադարանի մի ձեռագրում, «Պատճառ սառմանաց գրոց» տշխատության թարգմանության ավարտման թվականն է նշանակված հետևյալը. «Յերանելոյն Աղամայ ի գրտխտն մինչև ի յաւարտումն գրոցս էր թիւ ժամանակիս ՅԷԴ, զի յեւանելոյն Աղամայ մինչ ի Քրիստոս»՝ և ի ծնեղնն Գրիստոսի ՌԾԺԶ ամ. իսկ թվին մեն Հայոց էր 249։

43. Գարեգին կաթողիկոս Հովնաթան, Հիշատակարանը ձեռագրաց, Անթիպոլս, 1951 թ., էջ 53—54.

44. Նույն տեղում, էջ 848.

45. Լ. Խալիկյան, ԺԳ դարի Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1950 թ., էջ 86.

46. Լ. Ք. Սարգսյան, Յուդակ ձեռագրաց համար II, էջ 567.

ևթն այստեղ ուղղելու յիններ գրական մի փոքրիկ սխալ—ՃԷԴ-ն՝ ՅԵԺԴ-ով, ապա բոլոր թվահաշիվները կհամապատասխանեն իրար—6514—5198 = 1316, ճիշտ կստացվի նաև հայկական թվականը, եթե ավելացնելու յիններ ոչ թե 551, այլ 553 (763 + 553 = 1316)։

Ե. Հայտյանի վտապարտմանի ձեռագրաց յուսուցիւմ Եկարագրված Վանի Արարոց Ս. կեղեցու Մ 11 Ավետարանը գրված է «ի մեն թուխ, ի յիշատակ յոչադայութեան արեղական ստորիցիւր երկնայու ճանապարհաւ, յերկնից ի յերկրի հայելով՝ ըստ արարչութեանըն յափեալ յեւանելոյն Աղամայ ի գրտխտն 248 և 249 ամ ըստ նախնասնիցն, որով մեր վարքմբ, իս ի մարդկութենն Բունին Աստուծոյ անժամանակ էին և Փրկչին ճիստսի Քրիստոսի ամս ՌԴՃԻԿ»⁴⁷ Այստեղ անհրաժեշտ է օրգել մի անվիճելի սխալ—Արարչության 248 և 249 թվականն օրգել 248 և 249-ի հետ և երկու թվականների հաշիվները ճշտվի կհամապատասխանեն իրար 6620—5199 = 1421.

Վարդան Արեւելցին խոսելով արարչության թվականի մասին, յոթնասնից թվականն ընդունում է 5198. «Ն. յելիցն Աղամայ ըստ նախնասնից,—գրում է նա,—հինդ հաղար հարիւր իննսուն և օթ»⁴⁸.

դ) Առաջուրյան Ալեքսանդրյան կամ Նիկողոսյուրյան լվալան։ Այս թվականով ստեղծագործությունից մինչև մեր թվականի սկիզբը հաշվվում է 5423 կամ 5424 տարի (եթե սեպտեմբերից առաջ է՝ 5423, իսկ հետո՝ 5424)։

Վենետիկի Մխիթարյանների Մ 207 ճառքնորի ձեռագրի գրությունն ավարտված է «յեւանելոյն Աղամայ ի փառակենցաղ գրախտն ամբ 24ԴՃԷԶ և ի ծնեղնն 4Է-նարարին մերոյ ամբ ՌԳՃԷԳ...»⁴⁹ Արարչության թվականն այստեղ հիշված է Աղեթսանդրյան թվահաշվով, ուստի 6766 թվից էթն հանելու 5423-ը, ապա ձեռագրի գրության թվականը կլինի 1343, որը և կհամապատասխանի վերև բերված տեքստում հիշված ներկա թվականի ՌԴՃԷԳ-ին, այսինքն 1343-ին։

Որգնկայի Ս. Սոփիա կեղեցու մի Ավետարանի գրչությունն ավարտված է «ի թուխ. բերութեանս 24Դ (տեքստում սխալմամբ 22Դ) և ի զայստեան Կենաբարբին մե. ըոյ ՌԳՃԷԶ, իսկ յեւանելոյն նախնի մարգարի

47. Ե. Հայտյան, Յուդակ հայերեն ձեռագրաց վտապարտման, Քիզիլա, 1915 թ., էջ 220.

48. Մենին վարդանայ Բարբրեթոյ Պատմութիւն արեղական, Մոսկով, 1861 թ., էջ 48.

49. Լ. Ք. Սարգսյան, Յուդակ ձեռագրաց համար Բ, էջ 174.

յանուշակ վայրէն 891Ը...⁵⁰ Արարչության հիշված թվականը Աղեքսանդրյան թվահաշվով է, ուստի 6739-ից պիտի հանենք 5423, կմնա 1316, որը և կհամապատասխանի ներկա թվականի ՌՅԺԶ-ին, այսինքն 1316-ին, Հայկական 764-ին և՛ թե գումարենք 552, դարձյալ կստացվի 1316:

Ազգագրագետ Ե. Հայայանի Վասպուրականում նկարագրած մի «Հարանց վարք» դրված է որ թվին ամաց յեւաներոյն ի դրախտէն Աղամայ ի ՅՈՒ ամի ըստ մեծի հային տոմարական արհեստին, և դարձեալ յԱղամայ ի ՅՊԾԾ ամի հինգհարիւրեկին, որ է էասայ իմաստասիրին, որ ի յԱղեքսանդրիայն ժողովին և սա է լուսն թվական Կիկլոնին և, դարձեալ յԱղամայ 89ԺԱ ամի ըստ Անանիա վարդապետին Շիրակայնոյ, և ի ծննդնէ կենարար Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի ի ՌՆԼԲ ամի... և թվին Հայոց ըստ արեթական տոմարի ՊԶԹ ամի...⁵¹ Արարչության 6630-ից հանենք յոթանասնից թվականը՝ 5198, ներկա թվականով կմնա 1432, արարչության 6711 թվից հանենք Շիրակացու թվահաշվով 5279, կմնա 1432, Հայկական 879-ին գումարենք 553, կստացվի 1432: Թվարկված այս երեք թվականներն էլ համապատասխանում են տեքստում հիշված ներկա թվականի ՌՆԼԲ-ին:

Քրիստոնական թանգարանի Հայկական բաժնի № 19 ձեռագիրը գրված է. «...յԱղամայ մինչև ցայսր՝ ամբ 824Է, իսկ Հայկական թվականիս՝ 2ԳԼԱ, և Հոռոմայեցոց մեծ թվականիս ՌՄԳԴ, և շրջանն, որ է փոքր թվականն ՄԼ ի յերկիրս Բզլին լուսնաց, որ այժմ եւթ թ կոչի...»⁵²:

Այս հիշատակարանը անգլերեն թարգմանությամբ հրատարակել է հայագետ Յ. Կոնի-րիթը և նշել, որ հիշատակարանում թվականներն աղավաղված են — ոչ մեկը չի համապատասխանում մյուսին⁵³: Իրականում ոչ մի աղավաղում չկա — ա) Արարչության 824Է թվականը ուղղելով 824Ե ձեւով, նրանից պիտի հանենք ոչ թե 5190, ինչպես կարծում է Կոնիրիթը, այլ հրեական թվահաշվով 5423 (6965—5423=1542), բ) Հայկական թվականին պիտի գումարենք ոչ թե 550, ինչպես վարվել է Կոնիրիթը, այլ

551 (991+551=1542), գ) Հոռոմական թվականին գումարել ոչ թե 247, այլ 248 (1294+248=1542), դ) Եվ, վերջապես, «փոքր թվական»-ի շրջան ասելով գրիչը նկատի ունի ոչ թե մտրուկ թվականը, այլ շարժական նոր նավասարդով սկսող տարին, որը հաշվվում է 1312-ից, ուստի և նա հավասար է 1542-ի (1312+230=1542):

դ) Արարչության հրեական թվականով ստեղծագործությունից մինչև մեր ներկա թվականը հաշվվում է 5271 կամ 5272 թվական:

Վանի Հայկականից եկեղեցու № 226 Ավետարանը ընդօրինակված է եղել «...յեկիցն նախաստեղծիցն մարդոցն ի դրախտէն՝ 2Թ և ԵՄԳ և ինն ամ ըստ Եթանասնիցն, որում մեք վարիմք, և է իր մարդեղութիւնէ Բանին Աստուծոյ... ամս ՌՅԻԲ»⁵⁴, Ձեռագիրը գրված է 1328 թվականին: Արարչության թվականն այստեղ հրեական թվահաշվով է և համընկնում է ընագրում հիշված մեր ներկա թվականին (6599—5271=1328):

Հայկական ՍՍԻՌ Պետական մատենադարանի № 4217 ձեռագիր Ավետարանը ընդօրինակված է ըստ արարչութեանցն յափեալ յեւաներոյն Աղամայ ի դրախտէն՝ 2Թ և 2Ծ և Ա ամ (6601), ըստ Եթանասնիցն որում մեք վարիմք, և է ի մարդեղութիւնէ Բանին Աստուծոյ... ամս ՌՅԼ (1330)»⁵⁵, Արարչության հրեական 6601 թվականից հանենք 5271 թվականը, կմնա 1330, որը և ճիշտ համընկնում է քրիստոնեական ՌՅԼ-ին:

Մոկսի Դաշտ թաղի Ա. Հակոբ եկեղեցու մի ձեռագիր Ավետարան ընդօրինակված է «յեւաներոյն Աղամայ ի դրախտէն 2Թ և 2Ծ է (6607) ամ ըստ Եթանասնիցն, որում մեք վարիմք, և է ի մարդեղութիւնէ Բանին Աստուծոյ... ամս ՌՅԼ»⁵⁶, Եթե 6607 թվից հանենք հրեական 5272 թվականը, կմնա 1335 թիվ, որը համապատասխանում է ընագրում հիշված ներկա թվականի 1335-ին:

Ջափախի Վաչագան գյուղի եկեղեցու Ավետարանը գրված է որ մեծ խոյս... յեւաներոյն Աղամայ ի դրախտէն 2Թ2Ծ[Ժ]Ա ամ և ի մարդեղութիւնէ Բանին Աստուծոյ անժամանակ էին և Փրկչին Յիսուսի Քրիստոսի ամս ՌՅԼԹ...»⁵⁷, Եթե 6601-ից հանելու յիննք 1339 թվականը, կմնա 5272, որը արարչության հրեական թվականն է:

50. Գ. վրգ. Սրվանձաթան, Թորոս աղբար, հատոր Բ, էջ 295:

51. Ե. Հայայանի ձեռագրաց ցուցակ, էջ 652:

52. F. C. Conybeare, A catalogue of the armenian manuscripts in the British museum, London, 1913, p. 34:

53. Նույն տեղում, էջ 35:

54. Ե. Հայայանի ձեռագրաց ցուցակ, էջ 180:

55. Լ. Խաչիկյան, ԺԳ դարի հայերեն ձեռագրերի յատակարաններ, էջ 234:

56. Ե. Հայայանի ձեռագրաց ցուցակ, էջ 193:


57. Ե. Հայայան, Ազգագրական հանդես, 1887 թ., Բ գիրք, էջ 284:



Ե. ԳՐԱԴԱՆԱԾԱՆԻ

ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՕՐՄԱՆՅԱՆ

(Հ ո յ Ն Ե Լ Ե Ո Ր Ե Ր)



Մայրաքիւս ալորեպիսկոպոս Օրմանյանը մեր ազգային-եկեղեցական նորագոյն պատմութեան մէջ ամենախնայաւոր և կարկառուն զեմքերից մէկն է իրրե ըրգմամբուտ եկեղեցական, վարչադեւո շողեորական և ըրգմարեդուն մատենապիւր:

Օրմանյան տասը դարակներու տեր հոտմեղապան զեղադործ Օրմանյան Անտոնի որդին էր: Ան ծնած է 1841 թվականի փետրեվարին: Ստացած է կաթողիկ կրթութիւն և պայքարելով պապի «Ռեվելլուտա» կոնդակին դէմ, ուրիշ 40 հայ կաթողիկէ հայրենասերներու հետ 1879-ին վերադարձած է Մայր եկեղեցիի ծոցը, հարադատ ժողովուրդին զիրկր: Նոստանդեուպոլսո հայոց պատրիարք Ներսես Վարժապետյանի պատկերավոր և զեղեցիկ ըրգատրութեամբ ըսած՝ Հոռմին ապարհներ ըրդուցիւ և հալուիւ հայուսկը եկաւ: Հոն հյուրէ իւր, հոս տանուտեւ էր, այն ձերը չէր, այս ձերն էր:

Օրմանյան Հայ եկեղեցիւ նշանավոր զեմքերէն մին հանդիսացավ որպէս մեծ վարդապետ, ըրգմակողմանիորէն կրթված ուսուցիչ և խորաւթախանց զիտեական: Դեռ 1868-ին աւ ռէո ուսիւ կուլված հրապարակային մեծահանդէս ընտութիւններու ժամանակ փրիստոպոյտութեան, աստվածարանութեան և եկեղեցական իրավունքի մաղիստորոսի զիտական տատենան էր ստացեր:

Հայ եկեղեցիի զիրկը դառնալէն հետ Օրմանյանի առջև կրացվի ազգային-եկեղեցական դործունէութեան ընդարձակ ասպարեզ իրրե ստաշնորդ, ուսուցիչ, Արմաշի նորարաց Դուրեվանքի վանահայր և ապա կոստանդնուպոլսո պատրիարք:

Օրմանյան սրբապան իր վարչական ընդունակութիւնները հանդէս ընրավ իրրե վարչադեւո եկեղեցական իր կարնտ առաջնորդութեան տարիներուն: Ան իր շուրջը ստեղծեց համակրանքի մթնոլորտ և կրցավ իր ողոթիւ ու համողկեր ընդլուծ արձակել տալ հայ ջարական ըանտարկյալները: Տարի մը էջմիածնի Դեորդյան մեմարանին մեջ Մակար կաթողիկոսի հրամանով իրրե աստվածարանութեան ուսուցիչ պաշտոնավարելէ վերջ մեկեցավ կոստանդնուպոլսո, ուր նշանակվեցավ ուսուցիչ Ղալաթիո կեդրոնական վարժարանին մէջ. և իրրե ջարդիչ՝ Ղալաթիո եկեղեցիին և հետո ալ Բերայի Ս. Նորորդութիւն եկեղեցիին:

1878-ին Արմաշի վանքին տեսչութեան կուլվեցավ, դործակից ունենալով Դուրյան Նդիշե վարդապետը: Օրմանյան մեաց ռոն յաթր տարի՝ մինչև 1886 հալիս, և նոյեմբերին կոստանդնուպոլսո պատրիարք ընտրվեցավ:

Ընծ է Օրմանյանի զերը Արմաշի դպրեվանքը վերստին կազմակերպելու գործին մէջ: Արմաշի դպրեվանքին մեջ, Օրմանյանի և Դուրյանի շուրջով, Հայ եկեղեցիւ պատեվր

բարձր պահող կարկառուն եկեղեցականներու շարք մը հասավ, ինչպես Մեծի Տանն Կիլիկիո աթոռակից կաթողիկոս Բարսեղ Կյուլենսերյան, Կոստանդնուպոլսո երբեմնի պատրիարք Զավեն արքեպիսկոպոս Նղիայան, Սրուաղեմի պատրիարք Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյան, նահատակ առաջնորդներ՝ Սմբատ եպիսկոպոս Սաստենթյան, Խոսրով

Հատովկ ռւշադրության արժանի է Օրմանյանի՝ Կոստանդնուպոլսո պատրիարքության պաշտօնավարութիւնը 1886—1908 թվականներուն, Այդ տարիները Օրմանյանի պատրիարքության փոթորկալի տարիները եղան, Օրմանյան ուներ իրեն հատովկ վարչադիտութիւն, բայց ազգային-եկեղեցական հարցերուն մեջ ան մասամբ կշարունակեց Ներսէս



Մաղափա աբԷպիսկոպոս Օրմանյան

եպիսկոպոս Պեհրիկյան, Գնել եպիսկոպոս Դալեմթյարյան և ուրիշներ, Օրմանյան պատրիարք ընտրվելին հետո ալ կշարունակեց իր բարոյական աշակցութիւնը բերել Արմաշին. ինքն էր, որ նպաստից սնտուկին ամսական 2.000 դահեկանի գումար մը հատկացուց Արմաշին:

Վարժապետյան պատրիարքի քաղաքականության գիծը:

Օրմանյան իր պատրիարքության փոթորկալի շրջանին մասին կգրէ.

Տեսախորդ պատրիարքներեն Աշրգյանը շահագանց կակուղ և Իզմիրլյանը շահագանց պինդ նկատված ատեն, երրորդին կմնար

(աշխատեց՝ Օրմանյանին — Է. Գ.) երկուքն խառն ընթացք մը գործածել, որ է երկու կողմերն ալ շուշափել և այս եղանակը բնորոշ է ներսին ալ տնտեսայինը...

1894—1908 թվականները համալսարանի ընդհանրական տարիները եղան, և ինչ որ նրան Օրմանյանի քաղաքականությունը եղավ՝ ռեալիստիկ չափի մեջ բուսությունները մեղմացնել, սպառնացող նորանոր վտանգները հեռացնել, հարստահարությունները լափավորել, տեղի ունեցած վնասները դարմանել, և ազգին հարվածայն և վերավորյալ վիճակին կազդույթման միջոցներ հոգալ, իսկ մյուս կողմեն շատ առաջ չերթալ զիջումներու մեջ, այլ ազգային իրավունքներու ափսոսելու պաշտպանել, ազգային զատիկ պատկանող սկզբունքները լիարժեք իսկ վիճարկելու ձևին զայնով աշխատել, որ բոլոր երկու ծայրերը միանգամայն նկատի առնող, հանդարտությանը և խոհմտությանը գործերը վարող, հնարավորը լազարակալին նախադասող, հաճախյալ ազգի մեջ նոր հաճախներ չհրավիրել (ընդգծումը մերն է — Է. Գ.), մեկ խոսքով լատին առածին հետևողությունը գործին ուժեղ, կերպին համեմատվող դարձունք մը¹:

Այս բոլորի հիման վրա Օրմանյան իր հեռանկարները կուսակցականները «կզդույթներ, քն ազգը վերավորված և հաճախված և շատ աշխույժ կուսակցության և տկարացած հիվանդ մըն է, որուն վրա անհասարակ զեղծեր և բուսն ցնցումներ փորձել, և ոչ ալ անոր մարմենն աշխույժ հանելու համարձակություն ունենալ, հիվանդը ամեն կողմեն հանդարտության պես կ'աշխույժ և կ'աշխույժ, այսպես գործել հնարավոր է»²:

1897 թվականի օգոստոս 6-ի արկածալից ցույցեն հետո սկիզբը կառնեն կուսակցականներու թշնամությունը զեպի Օրմանյան և «ինչ կ'աշխույժ շարունակեց մինչև Օրմանյանի պատրիարքության վերջը, և Օրմանյան իսկապես սալին ու մտրճին մեղտնող մնացող երկաթին զերը վառեց, մեկ կողմեն սալին պնդության և մյուս կողմեն մտրճին ելնելներուն հարվածները կրելով»³, Բայց հակառակ անյարինպատու պայմաններուն, Օրմանյան պատրիարք արդյունավետ գործունեություն մը ունեցավ, և զեղծու պատրիարք ընտրված՝ 1.200-ի ավելի բանտարկյալներու ներսում շնորհել տվավ և 30 մահվան դատապարտվածներուն պատիժը բանտարկության փոխել տվավ, կա-

րոտ և ուսումնասիրել աղոցմեն 35 հոգի դառնալան պետական վարձարաններ ղեկավարելու հրաման տալով արքունիքին և կուսականներու պոչու կողմային հիմնականություն հասկացված պարենը իր շանքերով հասկացվող համալսարանի որոշողը ընդարձակել տվավ հարակից պարսկերենով, կարտայաններու, այլ լեզուներու և որոշող համար հանդանակել տվավ 83.000 հնչում ոսկի և այս նպատակի դրամարով կրեմության Հայաստանի դատարաններուն մեջ բառասանն ավելի զույլական վարձարաններ բանալ տվավ, և իսկ ինչ որ ազգային ղեկավարներինն զատ, Գումարալիի Պատրիարքությանը, Մայր եկեղեցին և մայրաքաղաքի բազմաթիվ այլ եկեղեցիները նորոգել տվավ:

Օրմանյան սրբազան իր երկտասարդութենեն մինչև խոր ձերությունը — ապրած է ?? տարի — համակ գործունեություն և շարժում է եղած, համարողած է շատ երկիրներ՝ Խուսիս, Հունաստան, Անգլիա, Գերմանիա, Ֆրանսա, Ռեյնլանդ, Արևմտյան և Արևելյան Հայաստան, Կուսականներու պոչին, երեսակներ, Գումարալի և այլ երկիրներ ու քաղաքներ, խորացնելով իր հմտությունն ու աշխարհահանաչողությունը:

Ինչպես Արևմտյան Հայաստանի ամեն անկյունները, Տրապիզոնն ու Մամուտեն ալ միասին, Արևելյան Հայաստանի մեջ ալ Օրմանյան սրբազան անկոխ չէ թողած ոչ մեկ կարևոր պատմական վայր: 1896-ին Գարեգին վարդապետ Սրվանդատյանցի հետ Օրմանյան իր նախկին պատմական ուսումնասիրության և ձեռնագրության առթիվ ամբողջությամբ կըրգալի պատմական Հայաստանը: Ինչպես կ'երևի, Օրմանյան անխոնջ ուղևոր մը և հոսանքուն գործիչ մը եղած է:

Մեծ և պատկառելի է եղած Օրմանյանի զրական, պատմա-բանասիրական, աստվածաբանական վաստակը: Հակառակ անոր, որ իր կյանքի մեծ մասը անցուցել է վարձական պատմաբանատուն և ժամանակ խող աշխատանքներու մեջ, ախույժանալիք կարողացած է մեղ թողուլ զրական պատկառելի, մեծ, արժեք ժողովություն մը: Օրմանյանի ձգած պատմական և բանասիրական մեծարժեք վաստակն ալ բավական է, որպեսզի այս ասպարեզին մեջ ևս զինքը դասենք մեր ականավոր մտքի և զրի մշակներու, մեր վաստակավոր մատենագիրներու շարքին: Հակա հաստատության խնդրին շուրջ հրատարակած է 6 անուն աշխատություններ և խառնելն լեզուներով 1870—1873 թվականներուն: 1870—1880 թվականներուն հրատարակված են իր ավելի քան 9 անուն բանասիրությունները՝ «Հայուն անցյալը, ներկայն և ապագայն», «Հայության հոգին», «Միություն հայության»:

1. «Ազգապատմություն», հրատարակված էր 1900.

2. Նույնը, էջ 3083.

3. Նույնը, էջ 3084.

«Հայ ազգութիւն», «Կարօտ եմք», «Հայ երիտասարդութիւն» և այլն: Իր կարևորագույն ուսումնասիրութիւններէն են «Միսակաւ Բառարան»-ը, «Էջմիածին», «Վատիկանը և հայերը», «Հայոց նկնդեցիւն», որ լույս է տեսած հայերէն ավելի քան 4 անգամ, թարգմանվելով նաև ֆրանսերէն, անգլիերէն և ռուսերէն լեզուներով, «Համապատում», և հատկապէս իր գլուխգործոցը հանդիսացող «Ազգապատում»-ի երեք հատորները և իր մահէն վերջ նրուսազեմ հրատարակված իր վերջին գործը՝ «Խոհք և խոսք», որ շատ շահեկան ինքնակենսագրութիւն մըն է:

Որքան կհիշեմ, դեռ ձեռագիր կմնա Օրմանյանի «Պատմութիւն Արմաշու աշխատութիւնը, որ ցանկայի է շուտով հրատարակված տեսնելու:

Իրեն քաղաքագետ և վարչագետ Օրմանյան շատ իրապաշտ (ոնայիստ), հեռատես միտք մըն է և ունի ճշգրիտ ճանաչողութիւններ և զնահատումներ կյանքի և աշխարհի մասին: Անցյալին համար կպնդէ, թէ մերինին նման փոքր ազգ մը պետք յունեիր բնավ 4—5 կուսակցութիւններու: «Մենք պետք տունենք միայն ինքնապաշտպանության ընդհանուր միութեան մը, ինչպես անցյալ դարուն սկիզբը տունին հույները, սարսելու համար թրքու:

կան քոնակալ լուծը, պատանիններն և կիններն մինչև ծերերը, միութեան մը, որ պաշտպանէր հայ ժողովուրդը անոր կյանքին, ինչքին և պատիվին վնաս հասցնողներէն»: Ան արդարացի կերպով կքննադատէ նվրոպական պետութիւններու շահամոլութիւնը և մեր քաղաքական կուսակցութիւններու միամտութիւնը, որով անոնք հայկական հարցի լուծման մեջ մեծ հույսեր կապեցին նվրոպական մեծ պետութիւններուն: «Աշխարհի շահեշահը միայն Շահն է», — կեզրակացնէ Օրմանյան և կավելցնէ. «Մինչև որ հայտնապես լցուցվի կամ շտեմնվի, որ Անգլիա և Ֆրանսա Հայաստան մը կազմելու կամ Հայաստան մը քարվտելու մեջ իրենք օգուտ մը չունին, ոչ խոսքերուն հնար է հաճատալ և ոչ խոստումներուն վստահիլ»:

Մեր փրկութիւնը ուրեմն մեր մեջ էր և ոչ թէ խորամանկ և շահամոլ նվրոպայի մեջ, այլ այն պայծառ և ուժեղ զիտակցութեան մեջ, որով Արմեյաններ, Նալբանդյաններ, Շահումյաններ, Սպանդարյաններ, Մյասնիկյաններ, Միկոյաններ ճամբա քացին դեպի Սովետական Ռուսիան, որ ամենուն սնունդ և լույս կշռայլէ, որ կճանչնա ամեն ազգի գոյութեան իրավունք անխտիր:





Մ Ա Յ Ր Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք Ո Ւ Մ

Հ Ա Մ Ա Ռ Ո Տ Լ ՈՒՐ ԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊԱԲԼԻԿԱՅԻ 1956 ԹՎԻ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՌԱՔԵՆ.— Հունվարի 23—24-ին, Սրբանում, Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի նիստերի գահինում, կայացավ Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի յոթերորդ զուգարման երկրորդ սեսիան, որը բննարկեց Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի 1956 թվականի Պետական բյուջեն:

Հայկական ՍՍՌ 1956 թվականի Պետական բյուջեի մասին զեկուցումով հանդես եկան Հայկական ՍՍՌ ֆինանսների մինիստր ղեկավարաւ Լ. Ա. Սահակյանը և Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Բյուջետային հանձնաժողովի նախագահ ղեկավարաւ Գ. Տ. Զոյախյանը:

Հայկական ՍՍՌ 1956 թվականի Պետական բյուջեն նախատեսվում է եկամուտների դեռ՝ 1.335.639.000 ուրլի, ծախսերի դեռ՝ 1.335.060.000 ուրլի, ծախսերի նկատմամբ եկամուտների 639.000 ուրլի ղեկավարաւ 1956 թվականի համեմատութլամբ, այս տարվա բյուջեի տճր կազմում է 128.700.000 ուրլի կամ 10,6 տոկոս:

Ընթացիկ տարվա բյուջեից ժաղովրդական տնտեսության ֆինանսավորմանը հատկացվում է 625.869.000 ուրլի, այդ թվում՝ 340.054.000 ուրլին Պետական բյուջեի միջոցներից: Սոցիալ-կուլտուրական միջոցառումների համար նախատեսվում է 883.523.000 ուրլի կամ բյուջեի ծախսերի աճելի բան 66 տոկոսը: Այսպիսով, ժաղովրդական տնտեսության և սոցիալ-կուլտուրական միջոցառումների ֆինանսավորմանը հատկացվում է աճելի բան 1.223.000.000 ուրլի, որը կազմում է բյուջեի բոլոր ծախսերի 91,6 տոկոսը:

Կապիտալ շինարարութլամբ հատկացվող գումարների կազմում են աճելի բան 259.000.000 ուրլի: Այդ միջոցները հաշվին կկառուցվեն և շահագործման կհանձնվեն մի շարք նոր գործարաններ ու ֆաբրիկաներ, գարեջեր, հիվանդանոցներ, հասարակական կենցաղային սպասարկութլան ձեռնարկութլուններ, բնակելի շիններ:

Ռեսպուբլիկայի Պետական բյուջեի ծախսային մասում խոշոր միջոցներ են նախատեսվում լուսավորության և կուլտուրայի համար: Այդ նպատակին հատ-

կացվում է աճելի բան 562.000.000 ուրլի, այսինքն՝ 27.700.000 ուրլով աճելի բան անցյալ տարվա հասկացումներին:

Ընթացիկ տարում սոցիալապահութլան և ֆիզկուլտուրայի ղրա ծախսվելու է աճելի բան 233.600.000 ուրլի, սոցիալական ապահովութլան ղրա՝ 64.500.000 ուրլի: Նախատեսվում է քաղաքների և շրջանային կենտրոնների բարեկարգման համար ծախսել աճելի բան 122.000.000 ուրլի:

Գյուղատնտեսության և ջրային տնտեսության այս տարվա հատկացումները, միաթեկան բյուջեից ստացվող գումարներինց բացի, կկազմեն աճելի բան 99.000.000 ուրլի:

Բյուջեի մասին սրկերն ընդունելուց հետո սեսիան անցավ որակարգի մյուս հարցերի բննարկմանը և բնդունվեցին համապատասխան որոշումներ:

Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի յոթերորդ զուգարման երկրորդ սեսիան իր աշխատանքներն ավարտեց մեր սեկյուբլիկայի գյուղատնտեսության և արդյունաբերութլան հետագա զարգացման ղրա հեռապատկերներով:

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՒ ԷՊԻԴԵՄԻՈԼՈԳԻԱԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ 15-ԱՄՅԱԿԻՆ ԿԻՐԿՄԱՆ ՍԵՍԻԱ.— Լրացավ Հայկական ՍՍՌ Առողջապահութլան մինիստրութլան Հիդրենայի և Լպիդեմիոլոգիայի գիտա-հետազոտական ինստիտուտի հիմնադրման 25 տարին:

Ինստիտուտն իր գոյութլան ընթացքում ղրայի աշխատանք է կատարել, սեկուբլիկայի բնակչութլան առողջապահութլան ղրա ղրաքները, համունայնպատարկման, արդյունաբերական կեների առողջապահական պայմանների և մի շարք հիվանդութլանների կլիզեմիոլոգիայի ուսումնասիրութլան սղգութլամբ:

Ինստիտուտի հիմնադրման 25-ամյակի աթթվ տղի ունեցով հորիյունական սեպա, սրանց լովեցին ղեկուցումներ ղրա-հետազոտալան աշխատանքներ, սենղի առողջապահութլան ղեմով սեկուբլիկայում կատարվող աշխատանքների, ինկա-հետքային արդյունաբերութլան կեների կլիզեմիոլոգիայում աշխատանքի պայմանների բարելավման, Սովետական Հայաստանում առողջապահութլան զարգացման և այլ թեմաների ու թճկական գործեական հարցերի շուրջ:

ՍՏՈՐԵԿՐԱՅԱ ԶԵՐՄՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ.— Հայաստանը այժմ է ընկնում իր նախային շրջանի մեծ պաշտոններով, որոնց մի մասը երկրի մակերես է դուրս գալիս քարեր չերմոթյամբ:

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի երկրաբանական ինստիտուտի ջրաերկրաբանական բաժանմունքը այժմ աշխատանքներ է կատարում ստորերկրյա չերմոթյան ուսումնասիրման և այն մոզմվելը պատկերավոր նկարագրելով ուղղորդելու ուղղությամբ:

Բաժանմունքի գիտական աշխատողները նրանք Պետական համալսարանի երկրաբանական ամբիոնի լասախոսների հետ միասին ավարտել են Զերմոթյամբ և նրա մեքանիկայում հղած նախային ջրերի առաջացման ուսումնասիրությունը: Գիտական աշխատողները հատարել են տեղանքի երկրաբանական կատարողականի հանույթ, նշել ռոպտման այն կետերը, որտեղ շրջակայի է ստանալ քարեր չերմաստիճանի ջուր:

Այժմ ինտուն մետր խորությունից նախած նախային բուրն ունի մինչև 60 մետրման չերմոթյուն: Հե-

տադոտությունները ցույց են աղել, որ աղելի խորքնած չերմոթյամ ջրի չերմաստիճանը զգալիորեն բարձր է և հասնում է հարյուր ու աղելի աստիճանի:

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի արտադրողական ուժերի ուսումնասիրման խորհրդի բյուրոյի հաղորդման համաձայն, ստորերկրյա չերմոթյան ուղղորդումը կարող է նախանկարելու ունի ռեպուլիկայի էներգետիկայի համար: Այդ շիժի վրա ստալիկայում կկազմակերպվի Զերմոթի առաջարանի չերմաստանկարարումը, կկառուցվի չերմաէլեկտրակայան, որը էներգիա կտա մոտակա բնակավայրերին, ինչպես նաև ապակետարայի գործարանին, որը կառուցվելու է բնթաղիկ նկադյանում: Ընդերքի չերմոթյունը նետաղայում կօգտագործվի նաև անասնաղանական աղարանների ու չերմոցների տարաղման համար:

Այս աարի երկրաբանական ինստիտուտի ջրաերկրաբանական բաժանմունքի գիտական աշխատողները կշարունակեն Հանրապետի և ռեպուլիկայի այլ վայրերում հղած ստորերկրյա սար ջրերի ուսումնասիրությունը:





Ս Փ Յ Ո Ւ Ռ Ք Ո Ւ Մ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ 35-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՓԱՐԻՋԻ ՄԵՋ

1955 թվականի դեկտեմբեր 1-ին, Պիեթի սրահին մեծ. պատվո նախադասությամբ Ֆրանսայի Ազգային ժողովի պատվո նախագահ էղուար Էրիոյի և նախադասությամբ Նախկին Նախարար Ժյուստեն Գոդարի, փառիզայն դադարի մեծ խաղաղափառությամբ և Վանդալությամբ տունեց Սովետական Հայաստանի 35-րդ փառապանք տարեդարձը:

Հանդեսի կազմակերպության կմասնակցեին Ֆրանսահայ մշակութային միությունը, Ֆրանսահայ երիտասարդաց միությունը (ԺԱՖ), Զ. Մ. Ը. Մ-ը և քաղաքի ֆրանսացի և հայ հայրենասեր անձնավորություններ:

Մրահի ընթերցարդարված էր Սովետական Միության, Ֆրանսական և Սովետական Հայաստանի դրոշակներով և լետելալ վերտառություններով. «Կեցցե՝ Սովետական Հայաստանի 35-րդ փառապանք տարեդարձը»:

«Փառք Ս. Էմիլիանին և ողջոյն Ետրենալի Կարօղիկոս Վալդին Ս. ինքն»:

Բեմին խոր մեր Հայրենիքին այգիները ներկայացնող երկու հակա ողկույղներու և տերեւներու մեջեն յարձրացող Մասիններուն վրա կտնտնվեն երկու ազալիներ, որոնք կմարմնացնեն մեր ժողովուրդին խաղաղության իղձը, ձգտումը:

Մահահարություններու տակ ընթերցվեցալ նախագահական կադմր, որուն մաս կկազմեն ժյուստեն Գոդար, օրվան նախագահը, Ֆրանսայի սովետական հյուպատոս Միքայել Գուցինգոն, Զեխոսովական դեսպանատան զեմվորական կցորդ Ալլայիկ և տիկինը, Ֆրանսայի հունգարական հյուպատոս Ժորժ Զիլլեր, փարիզի արվարձաններին Բանիոյի քաղաքապետ Պրոի և տիկինը, Պիեթ Պարաֆ, Զ. Մ. Ը. Մ-ի ընդհանուր քարտուղար Մերոն Ասատուրյան և Կյուտեմյան, Ֆրանսահայ մշակութային միության նախագահ Ս. Ակորով, Ֆրանսահայ երիտասարդաց (ԺԱՖ) միության նախագահ Գ. Սողոմոնյան, փաստարան Բուրսիյան, զրազեու Լեոն Մու-

սինակ, յանաստեղծ Մ. Միլիք, զեղապետ Ֆալրը, սյրոֆ. Ռորոսյան, դաշնակահար Բաֆֆի Պետրոսյան, Էրդիլ Հայկաճուշ Ռորոսյան, Նկարիչ Եահնադարյան, Էրդիլ-Էրդահան Ժակ Դալ:

Սովետական Հայաստանի 35-րդ փառապանք տարեդարձին նվիրված այս հանդեսին ներկա էր հայ և օտար ազգիյի քան 3.000 հոգի, մինչ շատեր ալ տաքի մնացին տեղի յգոյության պատճառով:

Հանդեսը բացվեցալ Ֆրանսական, Սովետական և Հայկական հիմներու երգեղացությամբ, ապա նախագահ Ժյուստեն Գոդար իր բացման խոսքին մեջ արտահայտեց հավատքի ին և ֆրանսահայ դադարի նկատմամբ իր սերնու հարգանքը և հայ ժողովուրդին նկատմամբ իր հիացումը, հետո խոսքը տվալ Ֆրանսահայ մշակութային միության նախագահ Ս. Ակորովին, որ կանգ առնելով Նոյեմբեր 29-ի պատմական նշանակության և մեր ժողովուրդին լերած անսահման բարիքներուն և նվաճումներուն վրա, շնչունց ուսա մեծ ժողովուրդին անշահախնդիր օժանդակությամբ հայ ժողովուրդին և մեր երկու ժողովուրդներու միջև ստեղծված անխախտ եղբայրությունը:

Նախադահին հրավերին տեղի տալով, ժողովուրդին ծափահարության մեջ խոսք առավ սովետական հյուպատոս Միքայել Գուցինգոն, որ սովետական դեսպան Վինոգրադովի և ֆրանսաբնակ ըլլոր սովետական քաղաքացիներու անուշտվ շնորհավորելի վերջ Սովետական Հայաստանի 35-րդ տարեդարձը, ազնվուց, որ Նոյեմբերի 29-ը ալ միայն հայերու, այլև սովետական ըլլոր ժողովուրդներու կողմէ կատնվի այսօր: Սովետական ժողովուրդներու միջև ազգային հարցին առնադեմակրատական ձևով յուծումը, ըստով հյուպատոսը, պատմության մեջ առաջին անգամ ըլլալով կարելի եղալ միայն շոկտեմբերյան Մեծ հեղափոխության շնորհիվ, և ժո-

յոգություններու ինքնորոշման իրավունքներու հայտարարումովն էլ, որ փառապանծ հայ ժողովուրդն ալ կարելիութիւն ստացավ նվաճելու իր ազատութիւնն ու անկախութիւնը և ծաղկելու բոլոր մարզերու մէջ, Ապա հյուպատոսը անդրադարձավ այն անշահախնդիր սեփականութեան, որ հայ ժողովուրդը իր պատմութեան ճակատադրական օրերուն մէջ ստացավ ռուս մեծ ժողովուրդին և միւս բոլոր սովետական ժողովուրդներին: Սովետական Հայաստանի մէջ տեղի ունեցած հատուկ դիմութիւններուն նկատմամբ սովետական լոյրը ժողովուրդներու ուրախութիւնն ու հպարտութիւնը արտահայտելն վերջ, հյուպատոսը խոսքը ավարտեց ըսելով. «Կեցցե՛ք Սովետական Հայաստանի 35-րդ տարեդարձը, կեցցե՛ք Սովետական Միութիւնը»:

Ապա խոսք առավ Յրանսահայ Երիտասարդաց միութեան նախագահ Գ. Սողոմոնյան, որ նախ խոսեցավ իր Հայրենիք այցելութեան թանկագին տպավորութիւններու մասին, մասնավորաբար հիշեց, որ Սովետական Միութեան մէջ ամենեն շատ լսած բառը եղած է «միք»՝ «խաղաղութիւն» բառը, որ հայ աղբնակի մը կողմէն իրեն նվիրված աղափնի մը կերպովը կողմը պղծիկ մեղայի մը վրա գրված էր «Կեցցե՛ք խաղաղութիւնը»: Մեր Հայրենիքը, ըսով Սողոմոնյան, սովետական ժողովուրդներու եղբայրութեան և փոխադարձ անշահախնդիր օգնութեան շնորհիվ ոչ մեկ բանի պետք ունի բացի խաղաղութեան ամրապնդումէն, որ մեր բոլորին, բոլոր աշխարհի ժողովուրդներուն պարէն է: Հետո անդրադառնալով Ս. Էլմիաճնի կաթնօղիկոսական ընտրութեան, նա կանգ առավ մեր լավագոյն մշակույթի շահակիր Ս. Էլմիաճնի՝ մեր ժողովուրդին ազգապահպանման հարցին մէջ ունեցած կարևոր դերին վրա: Հետո խոսքը ուղղելով Ֆրանսահայ Երիտասարդութեան, ըսով, որ մեր Մայր Հայրենիքը և Յրանսան լավագոյնս սիրելի կարելի է միայն պաշտպանելով խաղաղութիւնը:

Նախագահ Ժյուստեն Գոգար իր փակման խոսքին մէջ անդրադարձավ հայ և ֆրանսացի ժողովուրդներու եղբայրութեան և շնչտեց Ֆրանսահայ գաղութի բերած սրտառու օժանդակութիւնը Յրանսային, ապա եղբայրացուց, որ հայ ժողովուրդը, բազմադարյան իր մշակույթի պտուղը տալն վերջ բոլոր ժողովուրդներուն, այսօր Արարատի ետեւն աղափնի մը կթոցեն ղեպի աշխարհի ժողովուրդները, Հարգելի նախագահ մեր ժողովուրդի խաղաղասիրական ձգտումը բնորոշեց որպէս դարավոր տառապանքի և բնաշնչման նպատակով եղած փորձերուն ղեմ

հայ ժողովուրդին ապրելու կամքի վճռականութիւնը և անդրադառնալով Կոստանդնուպոլսո 6—7 սեպտեմբերի գնալքերուն, ցուց տվավ Խլուրքիո մէջ հայութեան ղեմ տակաւին շարունակվող հալածանքը և անդրադարձավ այն մասին, թէ միջազգային խաղաղութեան պահպանումը որքան կենսական կարևորութիւն ունի հայ ժողովուրդին և բոլոր ժողովուրդներուն համար:

Նախագահը ապա հրապարակեց Նոյեմբեր 29-ի առթիվ ղրկվելիք շնորհավորական ուղերձները Յրանսական Հանրապետութեան նախագահ Ռենե Գոտիին, Հայկական ՍՍԻՄ-ին և խորհրդարանին, Սովետի նախագահ Ա. Քոչինյանին, Յրանսական Ազգային Ժողովին և օրվան հանդիսութեան պատվո նախագահ Էդուար Էրիտին, Ամենայն Հայոց Կաթողիկոս Նորին Ս. Օծոթիւն վազգեն Ա-ին, Արտասահմանի հետ կոպտութեան կապի Հայկական ընկերութեան նախագահին: Այս հայտարարութիւնը ընդունվեցավ բոլոր ծափահարութեամբ, եւ երբ Ժյուստեն Գոգար հրապարակեց Սովետական Միութեան Միեւրոպայի Սովետի առաջին փոխ-նախագահ և Երեւանի ղեկավար Անաստաս Միկոյանին ուղարկվելիք հեռագիրը, ներկաները հորդեկայս ծափահարութիւններով ողջունեցին այն և սրահը անգամ մը ևս թնդաց խանդավառ ծափահարութիւններով:

Հանդեսի վերջավորութեան ծաղկեփունջը ստացան սովետական հյուպատոսն ու նախագահ Ժյուստեն Գոգարը, ժողովուրդին խելահեղ ծափահարութիւններուն մէջ նախագահը ստացավ նաև Հայաստանի կոնյակ և Հայաստանեն ստացված փոքրիկ սափոր մը:

Այսպէս վերջացավ հանդեսին պաշտոնական մասը, որուն հաջորդեց գեղարվեստական լաւերը, որուն իր մասնակցութիւնը բերավ «Նաիրի» երգչախումբը՝ ղեկավարութեամբ Գ. Յանպեկյանի և մեներգներով երգիչ և երգահան Ժակ Դալի: Մասնավոր դահասանքի արժանացավ Գ. Սարյանի դրամ և Ա. Սաթյանի դաշնավորած «խաղաղութեան երգը»:

Քնդարվեստական բաժնին վերջին մասը կկազմէր «Լեռնային լճի գալանիքը» անուն հայկական գունավոր ֆիլմին ցուցադրութիւնը, որ արժանացավ ներկաներու բարձր գնահատութեան:

Սովետական Հայաստանի 35-րդ տարեդարձը տոնվեցավ Յրանսայի հայաբնակ շրջաններին տասնըշուրս տարբեր վայրերու մէջ մեծ խանդավառութեամբ:

ՖՐԱՆՍԱՀԱՅ ԻՐԻՏԱՍԱՐԳՎԱՑ ՄԻՈՒԹՅԱՆ
ՔԱՐՏՈՂԱՐՈՒԹՅՈՒՆ

